

ԾՆՆԴԵԱՆ 70- ԱՄԵԱԿԻ  
ԵՒ ՆՈՐ ԳՐՔԵՐԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ  
**ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԸ  
ԸՍՏ  
ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԻ**

# Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ տարի, թիւ 134, 7 Նոյեմբեր 2012,  
1800 թուման  
Հայաստանում՝ 320 դրամ

## ԱՅՍ ԶԱՄԱՐՈՒՄ

- 2 Սիրիահայերի վիճակը ծանրանում է
- 3 Զարցագրոյց Լեւոն Ահարոնեանի հետ
- 6 Զոկտեմբեր 27-ի բացայայտումը մինչեւ վերջ  
Սարգիս Յարութիւնեան
- 19 Փարի Չանգանէյի համերգը Երեւանում  
Արմինէ Մելիք-Իսրայելեան
- 22 Մարզակք  
Արման Տէր Ստեփանեան
- 24 Գիրքը թող մետրոյում



### 8 Ազատ Մաթեանը ըստ Ազատ Մաթեանի

Ծննդեան 70- ամեակի եւ «Ռ՛վ Է Զարեմցը» եւ «Աշխարհի Գերբը» գրքերի հրատարակման առիթով  
Մանկութիւն / Դպրոց / Աբաղան / Նոր Ջուղա-  
Յամալսարան / Փարիզ / Անապատի Ծաղիկներ  
/ Զայաստան / Զընդհատուող Եղանակ / Զարեմց  
/ Նարեկացի / Աշխարհի Գերբը / Ծառուորդլի /  
«Յանդէս» / Զաֆեզ եւ Խայամ / Ջուլի / ԺԺԿ

## Պարսկերէն բաժին

- |   |  |   |
|---|--|---|
| 2 Այս համարի հայերէն էջերում                    | 7 Զոկտեմբեր 27-ի բացայայտումը մինչեւ վերջ<br>Սարգիս Յարութիւնեան | 13 Անապատի Ծաղիկներ ժողովածուից մի բանաստեղծութիւն    |
| 4 Իրան-Զայաստան համատեղ Նիստ Լեւոն Ահարոնեան    | 8 Զայ նկարիչները՝ Յակոբ Կոչոյեան                                 | 14 Գառնի վերլուծը՝ հայերի մասին գիտելիքների հաւաքածոյ |
| 6 ԶԶԿ-ԲԶԿ յարաբերութիւններ<br>Գայանէ Աբրահամեան | 11 Ազատ Մաթեանը ըստ Ազատ Մաթեանի                                 |   |

<p><b>Յոյս</b> Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p><b>Արտոնատեր՝</b> Լեւոն Ահարոնեան</p> <p><b>Խմբագիր՝</b> Ռոբերթ Սաֆարեան</p>	<p><b>Խմբագրական կազմ՝</b> Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p><b>Գեղարւեստական ձեւաւորում՝</b> Լիա Խաչիկեան</p> <p><b>Գովազդ</b> Անի Ղելիչեան</p>	<p><b>Կայք</b> Քաջիկ Սաֆարեան</p> <p><b>Մարզական</b> Արման Տէր Ստեփանեան</p> <p><b>Բաժանորդագրութիւն</b> Քաթրին Եաղուբի</p>	<p><b>Զասցե՝</b> Թեհրան, Ջամ պողոտայ, համար 18, բնակարան 1 88770658 88775656</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
--	--	---	---

## ՍԻՐԻԱՅԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԾԱՆՐԱՆՈՒՄ Է

*Այս օրերին ավելի հաճախակի են դարձել սիրիահայ զոհվածների և առևանգվածների մասին լուրերը: Չինյալ բախումները մոտեցել են Չալեպին, ուր ապրում են սիրիահայերի մեծամասնությունը և դա ավելի վտանգավոր է դարձնում իրավիճակը: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հետևում է իրադարձությունները, սակայն պարզ չէ թե՛ ինչ լուրջ քայլեր կարելի է առնել օգնելու համար Սիրիայի հայությանը: Ստորև ներկայացնում ենք երկու լուր այդ մասին:*



### ՀԱԼԵՊՈՒՄ ԱՌԵՎՆՁԵԼ ԵՆ ՀԱՅԵՐԻ

Հոկտեմբերի 29-ին Հալեպի մոտակայքում պատանդ են վերցվել 10 մարդ, որոնցից 7-ը՝ հայ, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամլո քարտուղար Տիգրան Բալայանը:

Պատանդ վերցվածների 5-ի ինքնությունն արդեն պարզվել է՝ Կարո Փամփայան, Արսեն Արոյան, Լևոն Ջեյթունյան, հայր և որդի Բաշար և Ժորժ Ռաբաթներ, ովքեր Սիրիայում բնակվող հին հայերից են:

Ինչպես հայտնում են աղբյուրները, զինված դիմակավորները Հալեպ հասնելուց 1,5 ժամ առաջ կանգնեցրել են «Ջեյթուն տուր» ավտոբուսը, իջեցրել են բոլոր ուղևորներին, կանանցից պահանջել են հեռանալ, ապա ծեծել են տղամարդկանց և տարել: Բերիո թեմի ազգային առաջնորդարանի մամլո խոսնակ Ժիրայր Ռեյիսյանի խոսքով՝ համայնքի ղեկավարներն անում են ամեն ինչ՝ առևանգվածներին վերադարձնելու ուղղությամբ, գրում է Armenian Weekly հանդեսը: Նա հերքել է այն լուրը, թե առևանգվածներին վերադարձնելու համար փրկագին են պահանջել: Ավելի վաղ լրագրողները գրել էին, թե ապստամբները պահանջել են կառավարությունից 3 օրվա ընթացքում ազատ արձակել իրենց ձերբակալված 150 զինակիցներին, այլապես կսպանեն գերեվարվածներին: Երկուշաբթի Հալեպում հրկիզվել էր Նոր Գյուղ շրջանի Սուրբ Գևորգ եկեղեցին, և չձշտված տվյալներով՝ մի քանի սիրիահայեր սպանվել կամ վիրավորվել են Դամասկոսում ռումբի պայթյունից: Մոտ մեկուկես տարի առաջ սկսված քաղաքացիական պատերազմից ի վեր շուրջ 4 տասնյակ սիրիահայեր են զոհվել, իսկ հուլիսին Հալեպում մարտերի թեժանակուց հետո հարյուրավոր հայ ընտանիքներ հեռացել են քաղաքից:

### ՀԱԼԵՊՈՒՄ ՀԱՅ Է ՍՊԱՆԻԵԼ

Նոյեմբերի 1-ին Հալեպում՝ հայկական Սուրբ Գևորգ եկեղեցու մոտ, դիպուկահարի կրակոցից սպանվել է Ջորջ Կաբանջյանը, այս մասին news.am-ի թղթակցի հետ գրույցում ասել է Հալեպում Հայ առաքելական եկեղեցու տեղի թեմի մամուլի քարտուղար Ժիրայր Ռեյիսյանը:

Նրա խոսքով՝ առավոտից քաղաքի հայկական թաղամասում ականների պայթյունների ձայներ են լսվել, սակայն ներկա պահին հնարավոր զոհերի և թաղամասին հասցված վնասի մասին տեղեկություններ չկան: Ռեյիսյանը նաև տեղեկացրել է, որ Դամասկոս-Հալեպ ճանապարհին զինված ապստամբները երկու մարդ են առևանգել, որոնցից մեկը հայ է: Առևանգվածների մասին դեռ տեղեկություն չկա: Առայժմ անհայտ է նաև ավելի վաղ՝ հոկտեմբերի 29-ին, ապստամբ զինյալների գերեվարած 7 հայերի ճակատագիրը: Նրանք պահանջել են ազատել իրենց 150 համախոհներին՝ սպառնալով 3 օրվա ընթացքում իրենց պահանջը չկատարելու դեպքում սպանել պատանդներին: Սիրիայում արդեն շուրջ մեկուկես տարի շարունակվող քաղաքացիական պատերազմի ընթացքում շուրջ 40 հայ է զոհվել, իսկ պատերազմական գործողությունները Հալեպ տեղափոխվելուց հետո հազարավոր սիրիահայեր են հեռացել այնտեղից:

## ՋԱՐՑԱԶՐՈՅՑ ԼԵՒՈՆ ԱՅԱՐՈՆԵԱՆԻ ՅԵՏ ՊԱՏՉԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԻՋԵՒ ԾԵՂՔ ՍՏԵՂԾԵՑԻՆ

«Յոյս» երկչաքայթաթերթի արտոնատեր՝ Լեւոն Ահարոնեանը, Իրանի իսլամական յեղափոխութեան յաղթանակից յետոյ մօտ երկու տասնամեակ ակտիւ մասնակցութիւն է ունեցել իրանահայրութեան ազգային իշխանութիւններում որպէս պատգամաւոր, թեմական խորհրդի անդամ եւ Նախագահ, ինչպէս նաեւ որպէս կալուածային մարմնի Նախագահ եւ 10 տարի ազգային բուժարանի վարչութեան Նախագահ: Դա Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի 10-րդ եւ 11-րդ շրջաններն էին: Ինչպէս գիտենք, մեր ազգային իշխանութիւնների իրաւական կարգավիճակի անորոշութեան պատճառով՝ 11-րդ շրջանը տեւեց 14 տարի: Յեղափոխութեան յաղթանակին յաջորդող երկու տասնամեակները ճակատագրական տարիներ էին երկրի, ինչպէս նաեւ իրանահայրութեան համար: Այս տարիներին Պատգամաւորական ժողովում Լեւոն Ահարոնեանի գործունեութեան հետ աւելի ծանօթանալու համար դիմեցինք նրան հետեւեալ հարցերով:



### Պարոն Ահարոնեան, տարիներ շարունակ եղել էք Պատգամաւորական ժողովի անդամ: Արդեօք կարելոր մարմին է ՊԺ-ը:

Այո, շատ կարելոր: Փոքր համայնքները կարիք ունեն մի կառոյցի, որպէսզի կառավարեն իրենց հասարակական կեանքը: Իրանահայրութիւնը եւս իր կրօնը, մշակոյթը եւ լեզուն պահպանելու համար կարիք ունի մի կառավարող մարմնի: Մեր բարձրագոյն մարմինը Պատգամաւորական ժողովն է, որը ընտրում է թեմակալ առաջնորդին, թեմական խորհրդին եւ հաշիւեցնիչ մարմնին եւ այլ աշխատող մարմիններին: այսպիսով կարելոր դեր է խաղում մեր համայնքի կեանքում: Անձամբ մտածում եմ, որ Թեհրանի Հայոց թեմի Պատգամաւորական ժողովի 10-րդ շրջանը, որն ընտրւեց 1980 թւականին, լաւագոյնն է եղել: Դա առաջին Պատգամաւորական ժողովն էր Իրանի յեղափոխութեան յաղթանակից յետոյ, որին մասնակցում էին մեծ թւով մտաւորականներ: Նախքան այդ, միայն յատուկ մարդկանց էին թոյլ տալիս մուտք գործել ՊԺ, բայց այդ շրջանում զանազան մտածելակերպի տէր մարդիկ կարողացան մասնակցել դրա ընտրութիւններին եւ ընտրուել պատգամաւոր: 10-րդ ՊԺ-ի ընտրութիւններին հանգուցեալ Արմէն Հախնազարեանը եւ ես ամենաբարձր ձայնը բերեցինք: Ժողովուրդը լաւ մասնակցութիւն ցուցաբերեց:

### Իսկ յաջորդ շրջանները:

80-ական թւականներին, մինչեւ 86 թւականը, այն

շրջանում, որ դպրոցներում լուրջ հարցեր ունէինք, ժողովուրդը հետաքրքրած էր ազգային իշխանութիւնների աշխատանքներով եւ աշխուժ էր: Յետոյ սկսեց նաեւ արտագաղթը եւ ժողովրդի թիւ նւազումը: Մենք յեղափոխութիւնից յետոյ 16 հազար աշակերտութիւն ունէինք. դա աստիճանաբար հասաւ շուրջ 5 հազարի:

Սակայն 11-րդ ՊԺ-ին պատգամաւորների որակը փոխւեց. դրանք մեծամասնաբար արհեստաւորներ եւ գործաւորներ էին, որ բոլորովին անտեղեակ էին ազգային աշխատանքներին: Նրանք անկախ որոշման կարողութիւնը չունէին, աչքները իրենց գաղափարակիցին էր, տեսնէին թէ ինչ ձայն է տալիս, իրենք էլ նոյնը քւէարկէին: Դա բացասական ազդեցութիւն ունեցաւ մեր ազգային իշխանութեան վրայ: Բայց անկեղծութեամբ պիտի նշեմ, որ ժողովի ողջ կազմը լրիւ աշխատեց այդ երկար տարիներին: 11-րդ շրջանում պատգամաւոր ունէինք, որ երբ մենք դպրոցների հարցերն էինք քննարկում, վեր էր կենում կօշկակարութիւնից էր խօսում: Պարզապէս անտեղեակ էր: Կային մարդիկ, որ միայն ներկայ-բացակայ ասելու ժամանակ նրանց ձայնը լսեցինք: Արամ վեհափառը մի անգամ կէս ժամի չափ ներկայ եղաւ մեր ժողովում: Ես յետոյ նրան հարցրի, թէ ինչպէս տեսաւ այդ ժողովը, պատասխանեց՝ շատ ցածրորակ: Դա 11-րդ ՊԺ-ն էր, երբ միահեծան կուսակցութիւնը մի խումբ անտեղեակ մարդկանց բերել, մտցրել էր որպէս պատգամաւոր, որպէսզի իրենք ինչ ուզում են անեն:

Արդիւնքն այն եղաւ, որ ժողովրդի եւ ազգային մարմինների միջեւ ճեղքը շատացաւ:

11-րդ ՊԺ-ում, հանգուցեալ դոկտոր Հարմիկ Պաթեանի ատենապետութեան օրօք ուսանողների օգնութեամբ մի վիճակագրութիւն պատրաստեց, որի համաձայն, մարդկանց 70 տոկոսը չգիտէին ինչ է թեմական խորհուրդ կամ Պատգամաւորական ժողով: 2000 թականին, երբ վերսկսեց կանոնաւոր ընտրութիւնները, մեր ժողովուրդի միայն 10 տոկոսը մասնակցեցին՝ շուրջ 9000 հոգի մօտ 80000 բնակչութիւնից: Պա ապացուցում է, որ ժողովուրդն արդէն իրեն յետ էր քաշում, աւելի վատը 2004 թականի ՊԺ-ի ընտրութիւններն էր, որին մասնակցեցին մօտաւորապէս 4900 հոգի է: Այսինքն ժողովրդի մօտ 5 տոկոսը:

### **Աւելի յստակ կարող էք ասել ինչ է նշանակում թե՛ «իրենք ինչ ուզում են անեն»:**

Օրինակի համար, կարող եմ նշել Ալիքի նոր շէնքին յատկացած գումարի պատմութիւնը: Ես ժողովից դուրս լսեցի, որ 30 միլիոն թուման փող է վճարել Ալիքի նոր շէնքի կառուցման համար: Երբ խնդիրը արծարծեցի, վիրաւորեցին: Բայց ես պատգամաւոր էի, չէ՞: Ահա այսպիսի գործելակերպով հարւածում էին մեր ազգային մարմինների հեղինակութեանը: Պատգամաւորական ժողովը վերածում էին մի չեզոք մարմնի, որը ոչ մի ազդեցութիւն կամ որոշիչ դեր չունէր: Որոշումները կայանում էր ժողովից դուրս եւ դա սխալ էր: Արդիւնքը մեծ ճեղք էր ժողովրդի եւ ազգային մարմինների միջեւ: Մեր մտաւորականութիւնը իրեն յետ քաշեց մեր ազգային կեանքից:

### **Ինչպէս ասում էք, ՊԺ-ի մեծամասնութիւնը կուսակցական էին. երբ դուք տարբեր տեսակետ էիք ունենում, ի՞նչ կարող էիք անել, ի՞նչ էիք անում:**

Երբ ես անարդարութիւն եւ սխալ էի տեսնում ժողովում բարձրաձայն արծարծում էի: Օրինակ, Ալիքին վճարած 30 միլիոն թումանի հարցը ՊԺ-ում յայտարարեցի եւ մեծ աղմուկ բարձրացաւ եւ թեմական խորհուրդը խռովեց եւ ժողովից հեռացաւ: Մի հոգին էլ կարող է իր ազդեցութիւնն ունենալ: Ի հարկէ միայն ես չէի, միւսներն էլ էին խօսում:

Այսպիսի է վիճակը եւ հիմա, երբ մօտենում են Պատգամաւորական ժողովի ընտրութիւնները, սկսում են խօսել ազատութեան եւ դեմոկրացիայի մասին: Ի՞նչ դեմոկրացիա: Հէնց «Յոյս»-ը նկատի ունեցէք: Այն օրւանից, որ սկսել ենք հրատարակել, ծուռ աչքով են նայում ինձ: Նոյնը արին, երբ «Լոյս»-ն էինք հրատարակում, թէ ձախ ես, կոմունիստ ես, էլ ինչեր ասես, որ չասացին իմ հասցէին: Ներեցէք, այս բոլոր հարցազորոյցները եւ տեսակէտները, որ «Յոյս»-ի վերջին համարներում տպագրել էք՝ շատ լաւ: Լաւ էք անում, նեղութիւն էք քաշում, բայց սրանք լոգունգներ են:

Սրանք ճիշտ չեն խօսում:

Սրանք մարդիկ են, որ իրենք համայնքը կառավարելու կարողութիւնը չունեն: Տեսէք, Հայաստանում մեզ դեռեւս ասում են «հայրենադարձ»: Մի խօսքով, մեզ իրենցից չեն համարում: Հիմա, էստեղ էլ, որ մենք ծնւել ենք, առնւազն 400 տարի անցեալ ունենք, մենք մեր ձեռքով մեզ գցել ենք վանդակի մէջ: Այսինքն էն իրաւունքները, որ մի իրանցի ունի, մենք մեզ համար չենք պահանջում: Պետական այրերը անգամներ ինձ ասել են թէ դուք մեզ լուրջ փրոժէներ չէք ներկայացնում:

### **11-րդ շրջանից յետոյ ի՞նչ եղաւ:**

Ինձ չթողեցին ընտրել 12-րդ Պատգամաւորական ժողովում: Յետոյ մի այլ շրջանում եկան հրաւիրեցին, ասացին արի, նախագահ կը նշանակենք: Ուրեմն դեռ չընտրւած, ինձ նախագահ էին անում: Ուրեմն ո՞րն է դրա արժէքը: Իրենք նախապէս որոշում են, թէ ով պիտի նախագահ լինի: Այս բոլորի մասին աւելի համագամանօրէն գրել եմ գրքիս մէջ:

### **Չիմա ժողովրդին խորհուրդ կը տա՞նք մասնակցեն ՊԺ-ի ընտրութիւններին, թե ոչ:**

Ես կը ցանկանամ, որ ժողովուրդն ինչքան աւելի մեծ թւով մասնակցի ՊԺ-ի ընտրութիւններին եւ ոչ միայն 10 տոկոսով, որի 8 տոկոսը իրենք են: Եթէ ասենք 50 տոկոս, կամ թէ 30 տոկոսով մասնակցութիւն լինի, նրանք չեն կարող ամէն բան իրենց հակակշռի տակ առնել:

### **Մամուլի մասնակցութիւնը Պատգամաւորական ժողովի նիստերին ինչպէ՞ս էք գնահատում:**

Շատ բարձր եմ գնահատում: Պա շատ ճիշտ որոշում է եղել: Ես յեղափոխութիւնից յետոյ եղել եմ մեր ազգային կեանքի մէջ: Եղել են թռուցիկներ, որ իբր թէ թեմականը ամիսը 15 միլիոն դոլար եկամուտ ունի: Այսպիսի չափազանցած պատկեր կայ թեմականի եկամուտների եւ գոյքերի մասին: Բայց դա այդպէս չէ: Թէեւ հիմա հեռու եմ, բայց յարգում եմ այն մարդկանց, որոնք աշխատում են ազգային մարմիններում: Բայց երբ ամէն ինչ գաղտնի է մնում, ժողովրդի մէջ անվտանգութիւն է ստեղծուում: Ինչո՞ւ գաղտնի պահել. թող մամուլը գրի եւ ժողովուրդը կարդայ, իմանայ մենք որտեղ ենք կանգնած: Գաղտնի պահելով ի՞նչ ենք ուզում ձեռք բերել: Այսօր «Յոյս»-ը թոյն է դառել սրանց համար: Լսել եմ «Յոյս»-ը իրաւունք չունի դպրոցներ գնալ: Ինչի՞ համար: Պուք պիտի ուրախանաք: Թող ուրիշ թերթերն էլ գան եւ գրեն: Սխալ կը գրեն, կասենք սխալ է: Թողէք մարդիկ, մանաւանդ մեր մտաւորականութիւնը, որ մեծ թիւ է կազմում, գործեն մեր ազգային դրածքի մէջ:

Թեհրանի Հայոց Թեմի 15-րդ Պատգամաւորական Ժողովի  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու (Չէյթուն) շրջանի

ԱՆԿԱԽ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ  
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑԱՆԿ



Ալբերտ Բոչարեան



Դր. Էլիպս Մասեհեան



Վալդ Զախինեան



Ռոզիկ Տէր-Յովհաննիսեան



Վահէ Խաչատրեան



Սիլա Աւասափեան



Աշոտ Սինանեան



Սեդա Թախմալեան



Սերժիկ Սինոնեան

**Միասնական Ծրագիր**

1. Մշակել թեմի երկարաժամկետ ծրագիր և հայեցակարգապազայ գործունէութեան համար
2. Վերլուծել և բարելաւել դպրոցների և կրթական համակարգի ներկայ ոչ-գոհացուցիչ վիճակը
3. Արտագաղթի թափը կասեցնելու համար գործնական միջոցներ ձեռնարկել
4. Յատուկ ուշադրութիւն դարձնել համայնքի խոցելի խաւերի՝ այդ թւում կարիքաւոր ընտանիքների, տարեցների, ուսանողների և նորապսակների պահանջներին և խնդիրներին

[www.Patgam.com](http://www.Patgam.com)

Քարոզչական Շտաբ



# ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-Ի ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ ՄԵՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԸ ԿԼԻՆԻ

*Սարգիս Հարությունյան*

Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի ծեւակերպմամբ՝ այն, ինչ տեղի ունեցավ 1999 թվականի հոկտեմբերի 27-ին, ոճրագործություն էր Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի նկատմամբ, եւ եթե կան մարդիկ, ովքեր կանգնած են եղել ոճրագործության հետեւում, նրանք պետք է հայտնաբերվեն ու պատժվեն :

«Եթե կան ինչ-որ թաքնված դեպքեր, պետք է հայտնաբերվեն», - Այսօր Ազգային ժողովի բալուն՝ ոճրագործության հետեւանքով սպանված պետական ութ գործիչների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ տեղի ունեցած հիշատակման արարողությունից հետո լրագրողներին ասաց Հովիկ Աբրահամյանը:

Դիտարկմանը, թե չի դադարում քննադատությունն իշխանությունների հասցեին, որ անցած 13 տարիների ընթացքում անհրաժեշտ ջանքեր չեն գործադրվել ու չեն գործադրվում ոճրագործության կազմակերպիչներին բացահայտելու ու պատժելու համար, Ազգային ժողովի նախագահն արծազանքեց. - «Համամիտ չեմ, որ ջանք չի գործադրվել... Նույնիսկ այնպիսի մարդիկ են ներգրավված եղել այդ գործընթացներում, որ իրոք շատ շահագրգիռ են եղել, որպեսզի բացահայտեն մինչեւ վերջ: Համամիտ չեմ, որ կան մարդիկ, որ չեն ուզում, որ մինչեւ վերջ բացահայտվի»:

«Դա մեր ազգի, մեր պետության, մեր ժողովրդի պա-

տիվն է, որ մինչեւ վերջ բացահայտվի: Եթե կան էլի մարդիկ, որ մինչեւ այսօր հայտնաբերված չեն, թող հայտնաբերվեն», - հավելեց խորհրդարանի խոսնակը:

Ազգային ժողովի բալուն հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած հիշատակման արարողությանը ներկա էին պատգամավորներ խորհրդարանական բոլոր խմբակցություններից:

Ներկա էր նաեւ Կարեն Դեմիրճյանի այրին՝ Ռիմա Դեմիրճյանը: «Ո՛չ մոռանալու է, ո՛չ ներելու է թե՛ հարազատների, թե՛ հասարակության կողմից: Եվ բացահայտելու պահանջը մնում է ուժի մեջ միշտ: Դա միանշանակ է», - ասաց նա՝ շարունակելով. - «Բայց այսօր ես ուզում եմ շնորհակալություն ասել Ազգային ժողովի ղեկավարությանը, Հովիկ Աբրահամյանին՝ այս չարաբաստիկ 27-ի օրը հետեւողական հիշելու, հարգելու [համար]»:

1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ Նաիրի Հունանյանի զինված հանցախումբը, ներխուժելով խորհրդարանի նիստերի դահլիճ, իրականացրեց աննախադեպ ահաբեկչություն՝ գնդակահարելով 8 պետական գործիչների՝ Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանին, վարչապետ Վազգեն Սարգսյանին, խորհրդարանի փոխնախագահ-



1

1. Վազգեն Սարգսյանի հուղարկավորությունը

2. Կադր Ազգային Ժողովի զինյալ գրավման պահի վիդեոյից

3. Զինյալ հանցախմբի ղեկավար՝ Նաիրի Հունանյանը

4. Կարեն Դեմիրճյանը եւ Վազգեն Սարգսյանը



2



3



4

ներ Յուրի Բախշյանին եւ Ռուբեն Միրոյանին, պատգամավորներ Արմենակ Արմենակյանին, Միքայել Քոթանյանին, Հենրիկ Աբրահամյանին եւ նախարար Լեոնարդ Պետրոսյանին: 2003 թվականի դեկտեմբերի 2-ի դատավճռով Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը ցմահ ազատազրկման դատապարտեց Նաիրի Հունանյանին եւ նրա հանցախմբի 5 անդամներին, հանցախմբի եւս մեկ անդամ դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

«Լինենք անկեղծ՝ յուրաքանչյուրիս մտքում եւ հոգում մշտապես կա [այն], որ ի վերջո՝ սա կազմակերպված հանցագործություն էր», - «Ազատություն» ռադիոկայանին փոխանցեց խորհրդարանում ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Զոհրաբյանը: - «Եվ բոլորիս մտքում կա հարցը՝ ի վերջո երբեւէ այս կազմակերպված սպանդի պատվիրատուները եւ կազմակերպիչները կբացահայտվե՞ն, թե՞ ոչ: Եթե անգամ անընդհատ փորձենք շրջանցել այդ հարցը, հարցը դրանից չի վերանալու: Հարցը կա»:

«Հայ ազգային կոնգրեսի դիրքորոշումն է, որ կազմակերպիչների մասով քրեական գործի նախաքննությունը կարճվել է ապօրինաբար: Դա նշանակում է, որ մենք կարծում ենք, որ կազմակերպիչների մասով պատշաճ քննություն չի իրականացվել», - «Ազատութեան» ռադիոյի կայք»

յուն» ռադիոկայանին ասաց Ազգային ժողովի ՀԱԿ խմբակցության պատգամավոր Նիկոլ Փաշինյանը՝ շարունակելով. - «Հոկտեմբերի 27-ը ոչնչացրեց իշխանության լեգիտիմ հատվածը, եւ մինչեւ օրս այդ առումով Հոկտեմբերի 27-ի հետեւանքները վերացված չեն, որովհետեւ Հայաստանում դրանից հետո չի եղել լեգիտիմ իշխանություն»:

Նշենք, որ այսօր Պանթոն ու Եռաբլուր այցելեց ու զոհվածների հիշատակին իր հարգանքի տուրքը մատուցեց Հանրապետության առաջին նախագահ, ՀԱԿ-ի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ Կոնգրեսի ղեկավար կազմի հետ միասին:

Տեր-Պետրոսյանը չցանկացավ պատասխանել լրագրողների հարցերին:


Հայաստանի նախագահի եւ վարչապետի մամուլի ծառայություններից «Ազատություն» ռադիոկայանին փոխանցեցին, որ նրանց օրակարգում այցելություններ Պանթոն ու Եռաբլուր այսօր նախատեսված չի եղել: Նախագահի մամուլի քարտուղար Արմեն Արզումանյանը ընդգծեց, որ Սերժ Սարգսյանը տարվա ընթացքում մի քանի անգամ այցելում է Պանթոն ու Եռաբլուր՝ իր հարգանքի տուրքը մատուցելով Կարեն Դեմիրճյանի եւ Վազգեն Սարգսյանի հիշատակին:

Աղբիւր՝ «Ազատութեան ռադիոյի կայք»



# ԾՆՆԴԵԱՆ 70- ԱՄԵԱԿԻ ԵՒ ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՅՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

# ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԸ ԸՍՏ




## ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ծնել եմ 1942 թին, կամ ինչպես մայրս էր ասում, պատերազմի տարին: Ծնել եմ Թեհրանում, որտեղ ճակատագրի բերումով յայտնել էին ծնողներս՝ Ծատուր եւ Սապետ Մաթեանները, Իրանի Չարմահալ գաւառի Վերին Քոնարք գիւղից: Ես հաշուով նրանց ութերորդ գաւակն եմ: Ինծանից առաջ ծնած եօթից մինչեւ իմ ծնելը, պատահաբար կենդանի էր մնացել միայն մէկը՝ Ասքանազը, իսկ նրանից յետոյ ծնած երեքից նորից պատահաբար կենդանի մնաց էլի մէկը՝ Մասիսը: Անծամբ իմ փրկութիւնը ես չգիտեմ նոյնպէս վերագրել եմ պատահականութեան, թէ՞ այն քրիստոնեայ, թէ մուսուլման սրբերին, ինչու չէ՞ նաեւ գրբացներին ու թուղթ ու գիր անողներին, որոնց դիմել էր մայրս ինծանով յղի եղած ժամանակ եւ ինձ դուլ էր խոստացել Սք. Գէորգ եկեղեցուն: Չորս տարեկան էի եւ շատ պարզ եմ յիշում այն գիշերը, որ քնեցինք եկեղեցուն եւ միւս օրը մազեր խուզեցին, ուրախ էի, որ Հռոռնսիմա հօրքուրն էլ ինձ չէր ասի աղջիկ ու ես ամէն անգամ ստիպած չէի լինի նրա պահանջով վարտիքս ցած քաշել ապացուցելու համար իմ սեռային պատկանելութիւնը: Թեհրանից ինչ որ բաներ յիշում եմ, բայց այնտեղ ապրած իմ կեանքի առաջին չորս-հինգ տարիները բաւական չէին, որ Թեհրանը դառնար իմ քաղաքը: Սկսեց 46-ի ներգաղթը, մենք էլ էինք «գրւած», մեզ հերթ չհասաւ, Բայց Հայաստանը մեխուեց իմ ուղեղում, կամ ւաւելի բանաստեղծական, իմ հոգին մեխուեց Հայաստանի խաչին: Հայաստանը դարձաւ ինձ համար կարօտի ու երազանքի հեքիաթային եզերք:

Այս անգամ հայրս որոշեց, ընտանիքի բախտը որոնել Խուզատանում, կանչում էր նա՞թի ու գազի բուրմունքը:

# ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԻ






2001




1995



1981



... 2007...



... 2012 ...



## ԴՊՐՈՑ

Դպրոց մտայ Ահազում, թէ՛ս դրանից առաջ էլ հարցնողին ասում էի, որ վեցերորդ եմ, որովհետեւ այդպէս էի լսել մեծ եղբորիցս, նա ինձանից մեծ էր տասնհինգ տարով: Դպրոցը, իհարկէ, պետական էր, իսկ շաբաթական մի քանի ժամ էլ գնում էինք «հայոց դպրոց», որտեղ պարոն Յարութիւնը, նոյնինք թունի Ամատունին, իմ ձեռքը տուեց առաջին դասագիրքը: Էջեր են պէտք նկարագրելու համար իմ ապրումները այդ դասագրքի նկատմամբ, մինչեւ հիմա էլ տեսնում եմ դրա վարդազոյն կազմը, զգում եմ մինչ այդ ինձ բուրդովին անձանօթ տպագրական թանաքի հոտը: Ես ինձ համարում եմ, ինչքան զգացմունքային, նոյնքան էլ տրամաբանական մարդ, ու մինչեւ հիմա էլ չեմ կարողանում հասկանալ, թէ ինչու՞ նոյն յիշողութիւնը չունեմ իմ առաջին պարսկերէն դասագրքի մասին: Նոյնիսկ այդ օրերից «դպրոց» ասելիս ես յիշում եմ շաբաթական այդ մի քանի ժամը եւ ոչ թէ կանոնաւոր պարսկական դպրոցը: Ահազից Բանդար Մաշուր, Աղաջարի, Օմիդիէ, Միանքուի թափառելով, վերջապէս մենք ընկանք Աբադան: Այստեղ արդէն գոյութիւն ունէր կանոնաւոր Հայոց ազգային «Ադաբ» դպրոցը, որտեղ սովորեցի երեք տարի, աւարտելով տարրականս: Իսկ միջնակարգս աւարտեցի նորից պետական «Ռազի» եւ «Ֆարրոխի» դպրոցներում, մաթեմատիկական ճիւղում:

Հայոց դպրոց յաճախել եմ միայն երեք տարի, միշտ լինելով դասարանի առաջինը: Մաթեմատիկայի մէջ էլ եղել եմ, եթէ ոչ դասարանի առաջինը, ապա հաստատ առաջին եռեակից մէկը, բայց թէ ինչպէ՞ս թողեցի գիտութիւնը եւ հակեցի դէպի գրականութիւնը, այնքան էլ պարզ չէ նոյնիսկ ինձ համար: Կային, թէ՛ ներքին, եւ թէ՛ արտաքին պատճառներ: Դեռեւս տաս, թէ տասնմէկերորդ դասարանում գրել եմ այսպիսի բան.

Թւերի լեզուից ես շուտ ծանծրացայ,  
Այնտեղ ամէն ինչ չափուած էր, ձեւած,  
Սակայն ինձ համար, ես շուտ զգացի,  
Կային խնդիրներ շատ աւելի բարդ,  
Քան նաճումը ողջ տիեզերքի:

Կար անչափելիին հոգին մարդկային...

Եւ ես ուզեցի բացել ճամբաներ,

Ո՛չ թէ աստղից աստղ, այլեւ սրտից սիրտ եւ հոգի հոգի, եւ այլն

Ահա, այսպիսի տիեզերական «փռոժէ» էի պատրաստում իրագործել, եւ ընդհանրապէս վէպ ու բանաստեղծութիւն կարդալն աւելի հաճելի էր, թէ՛ս կարդացածս յաճախ կիսով չափ էի հասկանում: Մեր հայոց լեզուի դասը ընթերցանութիւն էր ու մի քանի բառերի հոմանիշներ, որոնք երբեմն աւելի անհասկանալի էին, քան իսկական բառը, բայց կար խօսքի հմայքը, որ գործում էր իմաստից ու բովանդակութիւնից անկախ. թէկու՞զ, կիսով չափ հասկացած բառերի ու տո-

ղերի տակ կար երեւակայական աշխարհը, այլուրը:

## ԱԲԱԴԱՆ

Աբադանում ապրած 9-10 տարիներին ես Աբադանցի էլ չդարձայ, լսել եմ, որ հիմա էլ Ամերիկայում հաւաքուած աբադանցիները ունենում են «հայրենակցական» հաւաքներ, բայց կարծում եմ հէնց Աբադանը ձեւաւորեց ինձ որպէս մարդ: Աբադանը օգնում էր մարդկանց ամէն քայլափոխի զգալու իրենց զրկանքների աստիճանը եւ հրձելու ամենաչնչին բարիքի թէկու՞զ բոլոր հեռուից առնելիս: Չեմ ասի, որ դրանք երջանիկ տարիներ էին ինձ համար: Կային, այնուամենայնիւ երջանիկ պահեր: Քեռիներս՝ Հայկազ եւ Հերոս Ստեփանեանները մշակոյթի մարդիկ էին եւ մեծ ազդեցութիւն ունեցան իմ հոգեւոր կեանքի ձեւաւորման վրայ: Մանաւանդ Հերոս դային, որը հանգիստ ու աննկատ, բայց հետեւողական կերպով ինձ ուղղորդում էր բանաստեղծութեան աշխարհում: Նրա բաւականին հարուստ գրադարանում ես անջատում էի ծանր իրականութիւնից, ու մանաւանդ նրա բարի ու խաղաղ հայեացքի տակ գտնում էի ամենաերջանիկ ապաստան:

Աբադանը ձեւաւորեց նաեւ իմ քաղաքական-հասարակական կողմնորոշումը: Դեռեւս տարրական վեցերորդում մեր դասարանում կային տարիքով աւելի մեծ տղաներ, նրանցից մէկը՝ Վրէժը գրատախտակին խաղաղութեան աղանի էր նկարում, որը այդ օրերին «Թուդէ» կուսակցութեան նշանաբանն էր, իսկ մի ուրիշն էլ՝ Մուկուչը կոտրուած խաչ էր նկարում, որը «Սումբա» կուսակցութեան սիմուլն էր: Ես առաջինին էի համակրում, բայց նրանց անվերջ կռիւներին չէի մասնակցում: Դա Իրանի նաֆթի ազգայնացման եւ դրան յաջորդող պետական հարածի օրերն էին, այդ հարածից չխուսափեց նաեւ մեր ընտանիքը:

Միջնակարգը թէ՛ս ես անց էի կացնում պետական դպրոցում, բայց կտրուած չէի հայկական դպրոցից: Երբ կազմակերպեց այդ դպրոցի աշակերտական միութիւնը, պարսկական դպրոցներում սովորող աշակերտներին եւս թոյլ տուեց անդամակցել: Միութիւնը ղեկավարում էր ուսուցչական կազմի եւ կանանց միութեան միջոցով, բայց ունէր իր վարչութիւնը, որի նախագահը ընտրեցին ինձ: Կազմակերպում էինք ուրախ երեկոներ, որտեղ ի շարքս դաստիարակչական մշակութային ծրագրերի լինում էին նաեւ «ազատ պարեր»: Ծրագրի այս մասը նկատի էր առնում բնականաբար, որպէս խայծ, աշակերտութեանը գրաւելու համար: Իմ դերը ընդհանրապէս ծրագրի առաջին մասում աւարտում էր, իսկ երկրորդ մասում ինձ զգում էի աւելորդ եւ չգիտէի ինչ անել: Ծրագրերին ներկայ էին լինում նաեւ երէցները, դէ, որպէսզի ջախելները չափը չանցնեն:

## ՍՊԱՅԱՆ-ՅԱՄԱԼՍԱՐԱՆ

Միջնակարգը ավարտելուց յետոյ Աբադանի հայ կանանց միութեան նախագահ, երջանկայիշատակ Տիկ. Մանուշ Գէորգեանը, ինձ առաջարկեց ուսումնա շարունակել Սպահանի պետ. համալսարանի գրէթե նոր բացած հայագիտութեան ճիւղում, խոստանալով բաւարար կրթաթոշակ: Ես, որ հիմնականում նիւթական դժարութիւնների պատճառով, բնաւ յոյս չունէի համալսարան մտնելու եւ որեւէ քոնքուրի չէի մասնակցել, սիրով ընդունեցի առաջարկը, որը եւ պայմանաւորեց կեանքիս հետագայ ընթացքը:

Երեք տարի ուսանող էի Սպահանում եւ բնականաբար ապրում էի Նոր Տուղայում, որն իրապէս նոր էր ինձ համար: Մթնոլորտը շատ տարբեր էր Աբադանից: Այդքան հայ միատեղ եւ չէի տեսել: Կարդացել էի Չարենցի «Երկիր Նայիրի» վէպը եւ շատ բաներով Տուղան ինձ նման էր թուում Չարենցի Կարսին: Շատ-շատ եմ ափսոսում, որ Նոր Տուղան չունի եւ հաւանաբար չունենայ իր վէպը: Այս բացը աւելի եմ զգում, երբ Տուղայում ծնած ու մեծացած մարդիկ սկսում են պատմել իրենց յուշերից: Այդպիսի վէպ գրելու համար պիտի ամբողջութեամբ տեղացի լինես, պիտի ունենաս քո փողոցը, քո բակը, քո դպրոցը եւ այլն: Ինձ թւում է, որ տասնեակ տարիներ այստեղ ապրելով, Տուղան էլ իմ քաղաքը չդարձաւ: Դրանով հանդերձ, եթէ երբեւիցէ գրելու լինեմ իմ յուշերը, Տուղան անկասկած ամենաշատ տեղը կգրաւի այնտեղ: Չեմ կարծում, որ այդ երեք տարւայ ընթացքում համալսարանից շատ բան սովորեցի, ամենանշանակալիցը երեւի այն էր, որ համալսարանում մեզ թարգմանութիւն դասաւանդող Դր. Մետրոպ Բալայեանի յորդորներով սկսեցի «Նարեկ»-ի թարգմանութիւնը, որը տեսեց երկար տարիներ:

Այդ տարիներին կատարեցի նաեւ հայ բանաստեղծութիւնից իմ կարծիքով բառացի թարգմանութիւններ, որոնք հետագային գրեթէ նոյնութեամբ լոյս տեսան ուրիշի անունով:

## ՓԱՐԻՉ

Համալսարանը ավարտելուց յետոյ վերադարձայ Աբադան եւ մէկ ուսումնական տարի հայոց լեզու էի դասաւանդում միջնակարգում: Ծնողներս Մասիսի հետ արդէն հաստատուել էին Սպահանում: Ամռան արծակլորդներն էի անցկացնում Սպահանում եւ մտածում էի մի այլ աշխատանք գտնելու մասին, երբ բոլորովին պատահաբար «Ալիք» օրաթերթում կարդացի մի յայտարարութիւն, ըստ որի, Թեհրանի բնակիչ պր. Անդրանիկ Յովհաննիսեանը հիմնել է կրթական ֆոնդ եւ մտադիր է երկու հոգու ուղարկել Փարիզ, սովորելու Պրոֆ. Ֆեյդիի դասաւանդած «Արեւելեան կենդանի լեզուների ինստիտուտում»: Անյուսօրէն մի դիմում ուղարկեցի եւ, ի մեծ անակնկալ ու ցնծութիւն

ինձ համար, ստացայ դրական պատասխան: Ասեմ, որ հիմնադրամը գտնուում էր Թեհրանի առաջնորդարանի հովանաւորութեան տակ եւ իմ ընտրութեան լուրը անձամբ ինձ յայտնեց ժամանակի թեմակալ առաջնորդ երջանկայիշատակ Արտակ արք. Մանուկեանը: Փարիզում էի 1968-ի Սեպտեմբերին եւ ուղղակի դէմ առ դէմ ելայ այն ուսանողական հզօր շարժմանը, որը վերածուեց համաժողովրդական յեղափոխական շարժման:

Յեղափոխութեան գաղափարը, ինչպէս ասացի, ինձ այնքան էլ խորթ չէր: Այդուհանդերձ Փարիզեան շարժումը ինձ վրայ թողնում էր աւելի շուտ մի արտասովոր կարնաւալի տպաւորութիւն: Եղաւ, որ ամէն



զգուշութիւն մի կողմ դրած մասնակցեմ ցոյցերին ու երթերին, որովհետեւ լինում էին ձերբակալութիւններ եւ արտաքսումներ, եթէ ձերբակալածը օտարերկրացի էր: Այն, ինչ այդ օրերին կատարուում էր Փարիզի փողոցներում ուղղակի ոչ մի կապ չունէր ինձ հետ, բայց չափազանց հետաքրքիր էր որպէս երեւոյթ: Երբեք համոզուած չեմ, որ մինչ օրս էլ լրիւ հասկացել եմ կատարածի իմաստը, բայց որ այդ իրադարձութիւններին թէկուզ միայն ականատես լինելը ինչ որ չափով յեղափոխել եմ նաեւ ինձ, դրանում կասկած չունեմ: Չմոռանանք, որ ես Փարիզ էի ընկել բռնապետական մի ռեժիմից, որն արեան մէջ խեղդել էր իր ժողովրդի ազատասիրական շարժումը, իսկ այստեղ յեղափոխութեան պարտութիւնն անգամ այլ երանգ ունէր: Շուրջ մէկ ամիս տեսած ընդհանուր գործադուլն ու ցոյցերը, բարիկադներն ու ոստիկանութեան հետ փողոցային բախումները, խանութների թալանն ու ւերածութիւնները անցան անարիւն:

Ֆրանսիայում ամենահեշտը համալսարան մտնելն էր, կարող էի անվճար կերպով արձանագրել որեւէ պետական ԲՈՒՀ-ում, իսկ ինձ համար առաջին դժարութիւնը լեզուն էր, որը պիտի յաղթահարէի հնարաւորին

չափ արագ: Ես ոչ մի բառ ֆրանսերէն չգիտէի: Ես ուզում էի ճանաչել ֆրանսական մշակոյթն ու գրականութիւնը, մանաւանդ նորն ու ժամանակակիցը, բայց, չերկարացնեմ, արդիւնքը եղաւ այն, որ ֆրանսերէնը դուրս մղեց անգլերէնը եւ դարձաւ իմ արտասահմանեան գրականութեան հետ առնչելու առաջին լեզուն: Ինստիտուտի եռամեայ շրջանը ւարտեցի 1970-ին, որից յետոյ արձանագրեցի նոյն ինստիտուտի դոկտորայի բաժնում, առաջարկելով «Չարենցը եւ 20-30-ական շրջանի խորհրդահայ գրականութիւնը», որպէս թեմա: Այստեղ իմ ղեկավար դասախօսն էր Սորբոնի համեմատական գրականութեան ամբիոնի հայագի վարիչ Պրոֆ. Շարլ Դեղէեանը: Առաջին տարին ւարտեցի յաջողութեամբ: 1972-ի Յուլիսին, այսինքն ուղիղ չորս տարի յետոյ վերադարձայ Իրան, որտեղ ինձ առաջարկ եղաւ աշխատանքի անցնել Սպահանի համալսարանում, որը դասախօսի խիստ կարիք ունէր, խոստումներ եղան, որ ինձ հնարաւորութիւն կտան վերադառնալու եւ պաշտպանելու, բայց դա երբեք էլ տեղի չունեցաւ, որովհետեւ հայոց լեզուի եւ գրականութեան ճիւղը միշտ էլ դասախօսի պակաս ունեցաւ եւ ունի մինչեւ այսօր, եղել են ժամանակներ, որ այս բաժինը կանգնել է փակման վտանգի առջեւ, եւ ես եղել եմ ճիւղի միակ դասախօսը: Այս տարի լրացաւ ճիշտ քառասուն տարին, որ դասաւանդում եմ այնտեղ:

Անունացել եմ Նոր Զուղայում 1973 թին Արաքս ԽուղաՎերդեանի հետ, ունեմ մէկ տղայ, որի անունը դրել եմ Մաթիա: Դա իմ միակ հօրեղբօր եւ հօրս կողմից միակ հարազատի անունն է, որին տեսել եմ կեանքում ընդամէնը մի քանի րոպէ, Թեհրանի երկաթուղու կայարանում, երբ 46-ին գիւղից եկել էին ներգաղթելու Հայաստան:

## ՀԱՅԱՍՏԱՆ 1991- 1994

Հայաստանը ինձ համար հոգեւոր իրողութիւն դարձաւ հէնց 46-ի ներգաղթից սկսած, ես, որ անվերջ որոնում եմ ամենավերացական բաների նիւթական հիմքը, մինչեւ օրս էլ չեմ կարողանում հասկանալ, թէ ինչպե՞ս Հայաստանը եկաւ ու բնակեց իմ մէջ չորս տարեկանում: Արդէն ասացի, որ ոչ մի տեղի հետ հոգեկան կապւածութիւն չեմ զգացել: Երբ գնացի Ֆրանսիա, մինչեւ երկու- երեք ամիս երազում տեսնում էի, որ վերադարձել եմ Իրան, եւ սարսափած ու քրտնքի մեջ կորած քնից վեր էի թռնում: Մինչդեռ շատերը տառապում էին Իրանի կարօտախտով: Այդուհանդերձ Փարիզն էլ չդարձաւ իմ քաղաքը, զուգէ՛ հէնց այն պատճառով, որ ես ունէի իմ հոգեւոր հայրենիքը՝ Հայաստանը, որն էլի ինձանից աննկատ ստացաւ «սովետական» վերադիրը: Այդ Հայաստանը, ունէր նաեւ իր նիւթեղէն արտայայտութիւնը, դրանք գրեթէ ին, որ ստացւում էին Թեհրանի «Սաքօ» գրախանու-

թից, դա ռադիոն էր իր ուշ ժամի խախտացող հաղորդումներով ու մանաւանդ պատւերով համերգներով, նկարներ, քնած, թէ արթննի երազներ եւ , իհարկէ, ներգաղթից շուրջ տաս տարի յետոյ հօրեղբօրս ընտանիքից ստացւած առաջին եւ կարծում եմ միակ նամակը, մանուշակագոյն թանաքով դպրոցական տետրակի անորակ (քահի) թղթի վրայ: Բարեւ բացողին./ Ջան կարդացողին./ Տան կարդացողը/ Յիշի գրողին: Դէ՛, այդ ժամանակ տան կարդացողը ես էի, մեծ եղբայրս՝ Աքբանազը կարծում եմ աշխատում էր Ահազում: Մի խօսքով, ես, էլի այս ամենով աննկատ ու աստիճանաբար դարձայ «հայաստանական», որը հայկական միջավայրում նշանակում էր նաեւ «ծախ»:

Այդուհանդերձ, առաջին անգամ Հայաստանում եղայ 1991-ին, որպէս ԻԱՄՄ-ի պատւիրակութեան անդամ: Հրաւիրողն էր «Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէ»-ն, մեզ ընդունեց կոմիտէի առաջին տեղակալ ընկեր, եթէ չեմ սխալւում, Ղազարեանը, որն իր խօսքն սկսեց ինքնաքննադատութեամբ, անցումային շրջանն սկսել էր: Նա խօսքը առաջ էր տանում անցեալում սփիւռքի նկատմամբ խտրական վերաբերմունք ունենալու եւ նոր ժամանակներում անցեալի սխալները շտկելու կապակցութեամբ: Տեսայ, որ շատ էր խորանում. նրան թիրիմացութիւնից հանելու համար ասացի, ընկեր Ղազարեան, կը ներէք ընդհատելուս համար, բայց մենք «միւսներից» ենք: Անմիջապէս եղանակը փոխեց եւ սկսեց դուատել «սփիւռքի հայրենասիրական կազմակերպութիւնների գործունէութիւնը, որոնք միշտ կանգնած են եղել Մայր Հայրենիքի կողքին» եւ այլն: Բոլոր դէպքերում մեզ լաւ ընդունեցին: Մէկ ամիս մնացինք «Դիւն» հիւրանացում, մեզ տրամադրեցին մեքենայ, Կոմիտէի վարորդ Խալտուրը մեզ տարաւ բոլոր տեսարժան վայրերը: «Ներգաղթած Իրանահայերի Միութիւնը» մեզ հրաւիրեց «Արովեան», «Րաֆֆի» դպրոցում հանդիպում կազմակերպեցին քաղաքի բնակչութեան հետ, որոնք մեծամասնութիւնը նախկին իրանահայեր էին: Տպաւորութիւնս այն էր, որ շուրջ 50 տարի ներգաղթից յետոյ, նրանք դեռեւս իրենց կոմպլեքսաւորւած էին զգում, եւ սա դեռ եղարդ Մանարեանի նման կայացած դերասանի մակարդակում, որը միութեան նախագահն էր:

Տպաւորութիւններս շատ հակասական էին, բայց ընդհանուր առմամբ մեծ, շատ մեծ էր ուրախութիւնս: Ես իմ կարօտների երկրում էի, որը հող էր, ծառ էր., տուն էր, մարդիկ էին: Երեւանը իմ երեւակայածից աւելի գեղեցիկ էի տեսնում:

Երկրորդ անգամ Հայաստան գնացի 94.6.23, 95 . 1.7 : կնոջս Արաքսի հետ: Դա մութ ու ցուրտ տարիներից մէկն էր, եւ մենք առիթը ունեցանք այն ճաշակելու: Ասեմ, որ իմ առաջին այցելութեան ժամանակ՝ 91-ի Սեպտեմբերին հանդիպել էի ԵՊՀ բանասիրական

Ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանեանին, որպէսզի կարողանամ դոկտորական պաշտպանեմ այնտեղ: Համաձայնութիւն էր կայացել թեմայի շուրջ՝ «Չարենց», փոխանցել էի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը եւ իմ հրատարակած յօդածները թեմայի շուրջ, եւ այժմ Երեւան էի եկել, թէ որպէս Սպահանի Համալսարանի դասախօս- ստաժիոր եւ թէ պաշտպանութեան խնդիրը իրագործելու ակնկալիքով: Բայց, ի մեծ հիասթափութիւն ինձ, Գառնիկ Անանեանն ասաց, որ ես պիտի թեմաս փոխեմ, որովհետեւ Չարենցի մասին արդէն իսկ ամէն ինչ ասած է, էլ դու ի՞նչ ես ուզում ասել: Դա, կարելի է ասել, իմ առաջին գործնական ծանօթութիւնն էր հայրենի իրականութեան հետ: Ես թեմաս չփոխեցի, այլ հրաժարեցի նման մտայնութեան տէր մարդու հետ ընդհանրապէս գործ ունենալու գաղափարից: Այս վեց

ամիսները, ունեցայ այլ ծանօթութիւններ ու շփումներ, որոնց մասին հնարաւոր չէ խօսել այս նեղ շրջանակում, կարող եմ ասել միայն, որ հէնց այդ ամիսներին ծնւեցին իմ չորս երկար բանաստեղծութիւնները՝ «Երեւան 93», որը պիտի լինի 94, ես թւականը շփոթել եմ, «Վտարանդին», «Ուխտաւորները», «Այնուամենայնիւ»:

## ՉԱՐԵՆՑ

Բացարձակապէս անգրագէտ մայրս, իմ շատ փոքր հասակից արտասանում էր «Ես իմ անուշ...»ը իր գրեթէ անաղարտ պահպանած գիւղական հնչերանգով: Հասկանալի է, ոչ նա գիտէր, եւ ոչ էլ ես, թէ դա ու՞մ բանաստեղծութիւնն է: Չարենցի հետ առաջին «պաշտօնական» հանդիպումներս տեղի ունեցան պատանի տարիներին, մօրեղբօրս Հերոս Ստեփանեանի մի-



# ՄԱԹԵԱՆԸ ԵՒ ԻԱՄՄ-Ն

րատ» եմ համարել, ինչը, երեւի, նշանակում էր անյուսալի տարր այն օրերի խիստ լարած իրավիճակում, բացի դրանից կար նաեւ նախայեղափոխական շրջանի իմ գործունէութիւնը, որպէս Նոր Ջուղայի Ներկայացուցչական ժողովի անդամ, որը կարող էր մեկնաբանել որպէս համագործակցութիւն Դաշնակցականների հետ, թէեւ ես այդ ժողովի անդամ ընտրուում էի որպէս անկախ թեկնածու եւ ժողովի ներսում էլ համարում էի լուռ ընդդիմութեան խօսնակ ու ներկայացուցիչ: Իսկ երբ յեղափոխութիւնից յետոյ սկսեց ժողովրդական շարժում, ես, որ այդ ժամանակ Ներկայացուցչական ժողովի նախագահն էի, ինձ բացայայտեցի որպէս բողոքող ժողովրդի համակիր և սկսեցի հանդէս գալ համահաւաքներում: Իմ այս դիրքորոշումը ժողովի դաշնակցական մեծամասնութեան կողմից համարեց դաւադրութիւն և նրանք ինձ վտարելու փոխարէն նպատակայարմար գտան խմբական շրջաբերականով հրաժարել եւ այդպիսով ցրել Ներկ. ժողովը : Դա կատարեց մասնաճիւղի հիմնադրումից շատ առաջ:

**Այդ դեպքում ինչպէ՞ս դարձար եւ այդքան տարի մտացիր Նախագահ:**  
Ես չլինելով հանդերձ վարչութեան անդամ, ակտիւ մասնակցում էի միութեան մշակութային և հասարակական աշխատանքներին, այնպէս որ, երբ քաղաքական պատճառներով վարչութեան չորս անդամները ձերբակալուեցին կամ հեռացան, իմ ու մի շարք միութեանական ընկերների առջեւ դրուեց մասնաճիւղը լուծարումից փրկելու խնդիրը: Մենք անմիջապէս կեանքի կոչեցինք ընտրական յանձնախումբ, որը հաստատուեց Թեհրանի մասնաճիւղի կողմից, և ընդհանուր ժողովում ընտրեց նոր վարչութիւն իմ նախագահութեամբ: Այսպիսով կարելի է ասել, սկսում էր մասնաճիւղի երկրորդ շրջանը, որը թէ՛ շարունակութիւնն էր առաջինի, եւ թէ՛ ինչ որ իմաստով տարբերում էր նրանից:

**Կարո՞ղ եք ասել, ինչ քաղաքական պատճառների մասին է խօսքը:**  
Խօսքը «Թուղէ» կուսակցութեան գործունէութիւնը դադարեցնելու մասին է:

Ազատ Մաթեանը տարիներ շարունակ եղել է ԻԱՄՄ-ի Նոր Ջուղայի մասնաճիւղի նախագահը: Ինչ է եղել նրա դերը այդ միութեան հիմնադրման եւ ապագայ գործունէութեան մէջ: Այս հարցով ուղղակի դիմեցինք իրեն: Պատասխանը կտրուկ հետեւեալն էր.

Ես հիմնադրման մէջ դեր չեմ ունեցել: Ես չեմ հրաւիրել հիմնադիր ժողովին, որտեղ և ընտրուել է առաջին վարչութիւնը:

**Ինչո՞վ ես բացատրում պարագան.**  
Ինձ բոլոր մանրամասները յայտնի չեն , եւ այդ մասին երբեք էլ չեմ հարցրել իմ ընկերներից: Մի անգամ ականջիս ընկաւ, որ ոմանց տեսակէտից ես իբր շատ «դեմոկ-

ջոցով, դա Հայաստանում Չարենցի հեղինակութեան վերականգնման տարիներն էին եւ մօրեղբայրս ստացել էր նրա երկերի ժողովածուի 1954-ի հրատարակությունը: Բնականաբար կարդում էի առանց հասկանալու, բայց հասկանալու անհագ ցանկութեամբ: Չգում էի, որ Չարենցը թունամեծան էր, որ նա ուրիշ է, եղաւ ժամանակ, երբ նա դուրս մղեց թունամեծանին իմ միջից, պարզ է, ժամանակաւորապէս, եւ մնաց միակը: Դրանում կարծում եմ որոշիչ դեր ունէր գաղափարախօսութիւնը: Չարենցը յեղափոխական էր եւ բարձրաձայն յայտարարում էր այդ մասին, իսկ դա լիովին համընկնում էր իմ այդ օրերի տրամադրութեանը: Կար, իհարկէ, նաեւ խօսքի հմայքը: Մարդիկ եւ գաղափարախօսութիւնները գերադասում են ամէն ինչ պարզեցնել, լաւ - վատ, բարի - չար, արդար - անարդար, աջ-ձախ: Գուցէ եւ ամէն ինչ հէնց

այդքան պարզ է, մանաւանդ, երբ հեռաւորութիւնից ես նայում: Լեռը ճանաչելու համար հարկաւոր է մօտենալ նրան, մազլցել բարձունքները, իջնել վիհերը, չափանցել մթին քարայրները: Այդպէս էլ աստիճանաբար խնդիրները բարդացան հէնց ինձ համար եւ ես իմ առջեւ խնդիր դրեցի մեր պատմութեան ամենաբարդ ու ողբերգական ժամանակաշրջաններից մէկը եւ այդ ժամանակն ապրած բանաստեղծին ճանաչել միմեանցով: Աւելի շուտ հետախուզել բանաստեղծին իր ժամանակի մէջ, եւ ինչքան աւելի որոնեցի, այնքան նա դարձաւ անորսալի եւ գրաւիչ: Ամբողջ խորհրդային տարիներին հայ իրականութիւնը բնորոշում էր էլի երկութեամբ, ըստ որի, Չարենցը կամ կարող էր լինել բոլշեւիկ կամ ազգայնական ու մանաւանդ դաշնակցական, կամ «Ես իմ անուշ...» կամ «Լենինն ու Ալին»: Ես ինձ համար յայտնաբերեցի, որ Չարենցին «որսա-

**Յիմա, տարիների հեռուից ինչպէս ես գնահատում մասնաճիւղի գործունէութիւնը եւ նրա դերը համայնքի կեանքում:**

ԻԱՄՄ-ի Նոր Ջուղայի մասնաճիւղը աշխատել է շուրջ 20 տարի, որից 17 տարին ես եղել եմ վարչութեան նախագահ, հետեւաբար ես գուցէ ամենայարժանար մարդը չեմ նրա գործունէութիւնը գնահատելու համար, բայց փաստը մնում է փաստ, որ Շահինշահի հետ միասին այս միութիւնը այդ տարիների ընթացքում ներկայացրել է իրանահայ , գուցէ եւ սփիւռքահայ , համայնքների պատմութեան մէջ ամենաուժեղ և ազդեցիկ ժողովրդրդային շարժումներից մէկը, եւ դա, թէ՛ քաղաքական հասարակական թէ՛ մշակութային իմաստով: Բաւական է տեսնել մեր ազդեցիկ ներկայիս թէ՛ խորհրդարանական, թէ՛ ներքին համայնքային ընտրութիւններում:

**Այդ դէպքում հարց է ծագում, թէ ինչու՞ այդպէս անակնկալ կերպով փակեցին Նոր Ջուղայի եւ ապա Շահինշահի մասնաճիւղերը եւ մանաւանդ հրաժարեցին խորհրդարանական ընտրութիւններին մասնակցելուց:**

Կարծում եմ պատասխանը նաեւ այն դառն իրողութեան մէջ կարե-

լի է փնտրել, որ իր աշխատանքը դադարեցնում է մի այդպիսի ազդեցիկ հասարակական միաւորում եւ համայնքում բացարձակապէս ոչ մէկին, եւ ոչ անգամ թեհրանի մասնաճիւղի վարչութեանը, չի յուզում այդ հարցը: Միայն Ջուղայի եւ Շահինշահի շարքային միութեանականներն ու համակիրներն են, որ մինչեւ օրս էլ, հասկանալով հանդերձ իրավիճակը , ափսոսանքով են յիշում այդ փաստը: Իսկ ձեր հարցին որպէս պատասխան, ես այստեղ եւս ստիպւած եմ նշել միայն առաւել շօշափելի, այսպէս ասած, տեխնիկական պատճառները: Միութիւնը աշխատում էր վարձու մի շէնքում, որի ժառանգները դատարանի միջոցով ստացան այն ազատելու վճիռը, որից յետոյ համապատասխան տարածք վարձելը նիւթապէս հնարաւոր չէր: Իհարկէ, մինչ այդ յոյսը դնելով ինչ որ չափով բարեփոխւած ներքաղաքական մթնոլորտի վրայ, գրաւոր դիմեցինք թեմական խորհրդին նպաստաւոր պայմաններով մեզ մի տարածք տրամադրելու ակնկալիքով, որը մնաց անպատասխան: Սրան աւելացրէք նիւթական դժարութիւնները, մարդուժի աստիճանական նւազումը.....: Կան, իհարկէ, աւելի խորքային խնդիրներ, որոնց մա-

սին խօսելու համար աւելի լայն տեղ ու տարածք է հարկաւոր: Ինչ վերաբերում է խորհրդարանական ընտրութիւններից հրաժարելուն, ապա մենք այդ քայլին գնացինք այն բանից յետոյ, երբ թեհրանի դաշնակցականներն արդէն բացայայտ կերպով սկսեցին միջամտել հարաւային շրջանի ընտրութիւններին եւ աւտոբուսներով մարդ ուղարկել իրենց թեկնածուին քւէարկելու համար, աւելացնեն, որ նոյնիսկ այդ դէպքում նրանք յաղթեցին քւէների չնչին տարբերութեամբ, ուզում եմ ասել, որ Ջուղայի եւ ապա Շահինշահի մասնաճիւղերը իրենց գործունէութիւնը դադարեցրին այնպիսի պայմաններում, երբ մեծ ժողովրդակա-նութիւն էին վայելում համայնքում, բայց հէնց միայն դա էր մեր ունեցածը եւ դա բաւական չէր աշխատանքը շարունակելու համար:

**Եթէ ճիշտ հասկացայ, թեհրանի ձեր կենտրոնական վարչութիւնը տեղեկացած չի եղել ձեր այդ վերջին որոշումների մասին:**

Պ.Ոչ, մենք դա արել ենք ինքնուրոյն: Կազմակերպչական կապերը մեր եւ թեհրանի մասնաճիւղի միջեւ այնքան էլ ամուր չեն եղել եւ նոյնիսկ կարող եմ ասել, որ դրանք միայն անուճով են նոյնը եղել:



լը» դժար է, որովհետեւ նախ նա ինքն է իր որսն ու որսորդը միաժամանակ, եւ որ նա իր այլակերպումներով ինքն է խոյս տալիս այլոց հայեացքից, նրանց որսը չհառնալու համար: 1983-ին Թեհրանում հրատարակեցի իմ «Ո՞վ է Չարենցը» գրքույկը, այն անանելով ներածութիւն: Այստեղ ես առաջ էի քաշում այն գաղափարը, ըստ որի, Չարենցը երկուբեւեան թակարդին հակադրում էր բազմաձեւութեան եւ յաւերժ այլութեան գաղափարը, որպէս ազատութեան գրաւական, բայց որ, թէ արտաքին, թէ ներքին կապանքները արգելակում էին վերջնական ազատագրումը:

## ԱՆԱՊԱՏԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆԻՑ ԱՌԱՋ

Բանաստեղծութիւններ սկսեցի փորձել 16-17 տարեկանում, կարողանում էի յանգեր կապել, գրում էի վերացական բաներ, օրինակ ազատութեան պայքարի մասին, փորձում էի նաեւ քիչ ,թէ շատ ինքնուրոյն թեմաներ: Առիթը ներկայացաւ, որ ծանօթացայ «Նոր էջ»-ի շրջանակի հետ, մի քանի բան կարդացի, գովեցին, նոյնիսկ գտան, որ լաւ թեկնածու եմ շրջանակի համար, թէեւ նրանք բոլորն էլ արդէն միջին տարիքի մարդիկ էին: Դաւթարս տւեցի Դեւին, որի մէջ նշումներ է կատարել. Լաւ, վատ, բաւարար: մի քանի բան ուղարկեցի Բեյրութի «Շիրակ» ամսագրին, որոնք տպագրեցին 66-67 թերի երեք համարում, երրորդում լոյս տեսաւ նաեւ Լեւոն Դարբինեանի գովաբանական յօդածը՝ երիտասարդ, տաղանդաւոր, խոստումնալից եւ նման որակումներով, բայց այդ գովեստը քաջալերելու փոխարէն սառը ջրի տպաւորութիւն թողեց ինձ վրայ, ու այլեւս ոչ մի տեղ ոչ մի բան չտպագրեցի, մինչեւ «Անապատի Ծաղիկներ» ժողովածուն 1981-ին: Այստեղ արդէն ես իմ ասելիքն ունէի, եւ ասել եմ, վախենում էի ասել, որովհետեւ ասելիքս դառն էր ու յոռետեսական: Այդ բանաստեղծութիւնների մի մասը գրել էին Փարիզում, մի մասն էլ դրանից առաջ ու յետոյ: Դրանք գրել են նաեւ երկար ընդհատումներով, դրա համար էլ ընդգրկող ժամանակամիջոցի համեմատ թուվ քիչ են, բայց կարծում եմ հակառակ դրան նրանց մէջ պահպանւած է ասելիքի միասնութիւնը: Այս գիրքը, ինչպէս եւ գուշակել եմ խորագրում, մնաց «ձայն բարբառոյ յանապատի»: Գրքի միակ լուրջ արձագանքը լսելի դարձաւ տասնչորս տարի յետոյ: Գրախօսողը Վահէ Օշականն էր, «Ազգակ»-ում, որը, Տէրեանի խօսքերով ասած, լսել էր տագնապները իմ հոգու, եւ բաւականին բարձր էր գնահատել իմ բանաստեղծութիւնը: Նորվանն էլ, շատ անելի ուշ, երբ ծանօթացանք, ասաց, որ գիրքը ժամանակին հետաքրքրել է Թեհրանի երիտասարդ բանաստեղծներին:

## ՉԸՆԴԱՏԻՈՂ ԵՂԱՆԱԿ

Երկրորդ «Չընդհատող եղանակ» ժողովածուն բուրովին այլ բնոյթի է: Այն ամբողջովին քնարական

չնչով է գրւած: Հէնց այդ պատճառով էլ բառի եւ նրա բովանդակութեան կապը այստեղ անելի անմիջական է թւում: Գիրքը լոյս տեսաւ Երեւանում, 1995-ին հազար օրինակով, որից մի 200-ը իմ ձեռքը հասաւ, իսկ մնացեալը հանգամանքների բերումով ինչ որ ավտոտնակում մնաց անձրեւի տակ ու խմոր դարձաւ: Այս ժողովածուի առաջաբանը գրել է Գէորգ Էմինը, գրքի մասին գրեցին նաեւ Սուրէն Դանիէլեանը, Մետաքսէն եւ Վահէ Օշականը: Գէորգ Էմինը գրեց. «Հնդիկ մեծ բանաստեղծ Ռաբինդրանաթ Թագորի... «Պարտիզպանը» գրքից յետոյ ես այսքան մաքուր, գեղեցիկ-վեհացնող եւ միաժամանակ մտերմիկ ու յուզիչ սիրոյ բանաստեղծութիւններ չէի կարդացել...»:

## ԱՇԽԱՐՀԻ ԳԵՐԲԸ

Սա իմ բանաստեղծութիւնների երրորդ ժողովածուն է: Այն, հակառակ նախորդ երկու գրքերին, տարաբնոյթ է: Գիրքը կազմւած է երեք գլխաւոր մասերից՝ ցարդ գրքով չհրատարակւած գործեր եւ նախկին երկու գրքերից ընտրւած կտորներ: Մի տեսակ ստուգատես անելի քան քառասուն տարւայ իմ բանաստեղծական մտածողութեան: Նոր գործերի մէջ ընդհանուր առմամբ կայ մի տեսակ վերադարձ «Անապատին», բայց կայ նաեւ որոշակի տարբերութիւն կամ զարգացում մանաւանդ «Վտարանդին», «Ուխտաւորներ», եւ «Այնուամենայնիւ» գործերի մէջ, որոնք ես համարում եմ մէկ ամբողջութեան երեք մասերը կամ «եռագրութիւն», որով ես փորձել եմ պատմել իմ հոգու պատմութիւնը: Նախկին գրքերից նմուշներ դրել եմ, որովհետեւ նախ նրանց հրապարակութիւնից շատ ժամանակ է անցել եւ երկրորդ, որ դրանք այնքան էլ կարդացւած չեն եղել: Դա չի նշանակում, որ այս վերջինի հետ մեծ յոյսեր եմ կապում. Փաստը այն, որ սա հրատարակել եմ ընդամենը 300 օրինակով:

## ԾԱՏՈՒՐՈՂԻ

Իմ երգիծական մականունն է: Այս ժանրի մէջ գրել եմ նաեւ այլ մականուններով, բայց իբրեւ թէ թաքուն եմ պահում: Ծատուրը հորս անունն է: Այս մականունան հետ հետաքրքրի բան պատահեց: «Յոյս»-ը տպագրեց իմ «Մերն ուրիշ է» բանաստեղծութիւնը, որը նախապէս տպագրւած էր Ծատուրօղլի ստորագրութեամբ, եւ որի վերջին տան մէջ ըստ աշուղական բանաստեղծութեան անանդոյթի կար նոյն անունը, բայց «Յոյսը» թիրիմացաբար այն տպագրեց իմ իսկական անունով, այսպիսով կասկածողներին էլ յայտնի դարձաւ Ծատուրօղլու ինքնութիւնը:

Երգիծանքով ես ամենասերտ կապի մէջ եմ մտնում ընթերցողի հետ եւ այս տեսակէտից տրտնջալու ոչ մի պատճառ չունեմ: Իմ « Ամերիկացի Փեսացուն» 50 բեմադրութիւն է ունեցել Ջուլայում, Շահինշահիում եւ Թեհրանում, բեմադրութիւնը դադարեցւել է հնարաւոր

րութիւնների սղութեան պատճառով: 5 բեմադրութիւն եւս ունեցել է ԱՄՆ-ում: Մեծ հռչակ է վայելում նաեւ իմ գողացւած փեյքանի մասին գրած բանաստեղծութիւնը, Խաչատուր Կեսարացու արծանի մասին գրած «Վերջին տառը» եւ այլն:

Կարելորդ, որ ես այստեղ ամբողջութեամբ ազատում եմ ինձ գրական հայերէնի կապանքներից եւ գրում եմ, կարելի է ասել, պարսկահայերի խօսակցական լեզուով, ինչը չի յաջողում լուրջ գրածքների մէջ: Մի քիչ այլ է, երգիծական յօդածների պարագան, որոնց մէջ գերիշխում է գրական լեզուն, համեմատ խօսակցական, երբեմն նաեւ պարսկերէն բառ ու բանով:

Յաճախ եմ «Անապատի ծաղիկներ» ժողովածուն եւ «Փեյքանս տարան» ոտանաւորը համեմատում միմեանց հետ եւ մտածում եմ գուցէ աւելի լաւ կանէի հէնց սկզբից դառնայի երգիծաբան աշուղ թառով,

մեր հոգեւոր պատմութիւնն է: Եթէ Խորենացու պատմութիւնը աւարտում է ողբով, ապա Նարեկացու մատեանը ամբողջութեամբ ողբ է: Այս տխուր տրամաբանութեամբ մեր երրորդ գիրքը հաւանաբար պիտի համարել Աբովեանի «Ողբ Հայաստանի»-ն, եւ սա մեզ պիտի լուրջ մտածել տայ, մանաւանդ, երբ այդ երեք գրքերի կողքին դնենք նաեւ Ե. Չարենցի գիրք ճանապարհին: Ես այլ առիթով էլ ասել եմ, որ Նարեկացու «Մատեան Ողբերգութեան»-ը Անիի անկման մարգարէութիւնն է: Այն ժամանակ, երբ Անին հազար ու մէկ եկեղեցիների քաղաք էր, Նարեկացին ողբում է մեր բարոյական անկումը, ինչը եւ շատ չանցած յանգեցրեց Անիի վաճառքին:

## ՋՈՒՉԻ

2010- ի գարնանը Սպահանի ժամանակակից արես-



քամանչով, երգով: Սիրում եմ մտերմիկ հաւաքներում կատարել երգող, զւարճաբանի կամ թամադայի դերը:

## ՆԱՐԵԿԱՅԻ

Արդէն ասացի, որ «Նարեկ»-ի թարգմանութիւնը սկսել եմ Սպահանի համալսարանում սովորելու տարիներին Դր. Մեսրոպ Բալայեանի առաջարկով: Լսել էի այդ գործի դժարութեան մասին, բայց լսելը բաւական չէ ճիշտ պատկերացում կազմելու համար, որեւէ բանի մասին: Ինձ գործի մղողը մանկուց եկող այն գուցէ եւ մեծամիտ համոզումն էր, որ որոշ իմաստով ինձ ամէն ինչ յաջողում է:

Իսկ թէ ի՞նչ է ինձ համար «Նարեկ»-ը, կասեմ հետեւեալը: Եթէ Խորենացու «Պատմութիւնը» մեր աշխարհիկ պատմութեան գիրքն է, ապա Նարեկացու մատեանը

տի թանգարանում բացւեց իմ փայտեայ քանդակների ցուցահանդէսը «Ջուչի» անւանումով: Սա կարելի է ասել իմ «հորին» է, հայավարի ասած՝ պարապ վախտի խաղալիքը, նկարիչ դառնալու իմ երազի իւրովի իրականացումը: Չանագան կենդանական եւ մարդկային ֆիգուրներ եւ պատրաստում ամբողջովին չմշակած փայտի կտորներից:

Պիտի ասեմ, որ սա, ինչպէս ցանկացած խաղ, շատ հետաքրքիր եւ գրաւիչ զբաղմունք է: Բացարձակապէս անմիջական. ես կասէի զուտ ֆորմալիստական, երբ միայն տեսողութեամբ ընտրում ես բնութեան ստեղծած ձեւերը, միացնում իրար եւ ստեղծում նոր ձեւ, աւելի շուտ ձեւերն են, որ բոլորովին պատահական գտնում են միմեանց եւ միանալով դառնում են նոր, անակնկալ մի ձեւ:

## ՀԱՖԵՉ, ԽԱՅԱՄ, ԻՐԱՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Իրանը բանաստեղծութեան երկիր է, իրանցիները բանաստեղծական ժողովուրդ: Պարսկերէնով են ստեղծագործել բանաստեղծական խօսքի այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Ֆերդոսին, Խայամը, Հաֆեզը, Սաադին, Մոլաւին եւ ուրիշներ: Հայաստանում յատկապէս սիրած են Շամլուն, Ֆորուղը եւ Սեփեհրին: Անձամբ ինքս շատ բան եմ սովորել նրանցից: Անցեալ տարի իմ եւ Շափուր Ալինեժադի թարգմանութեամբ լոյս տեսաւ Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնների մի փունջ, որը շատ լաւ ընդունեց պարսիկ ընթերցողի կողմից:

Ինձ հիացնունք է պատճառում պարսից, թէ դասական, թէ նոր բանաստեղծութիւնը:

Իրանական արդի բանաստեղծներից թարգմանել եմ Ահմադ Շամլու, Ֆորուղ ֆարրոխզադ, Ախաւան Սալես, Սոհրաբ Սեփեհրի եւ այլ բանաստեղծներից մի ժողովածու, որը տպագրութեան պատրաստ է արդէն մի երեսուն տարի: Դրանցից որոշ կտորներ տպագրել են մամուլում: Շամլուից բանաստեղծութիւնների մի շարք 1994-ին ձայնագրեց Երեւանի ռադիոյում Սարգիս Նաջարեանի եւ Նանա Աբաջեանի ընթերցմամբ, որը, ըստ բանաստեղծի տիկնոջ՝ Այիդայի վկայութեան, Շամլուն յաճախ մեծ հաճոյքով է լսել իմ կողմից նրան ուղարկած ձայներիզը:

Ըստ երեւոյթին Օմար Խայամը հայերի կողմից ամենասիրած եւ ամենաշատ թարգմանւած բանաստեղծներից է: Ես գիտեմ 16 անուն, որ հաւանաբար ամբողջը չէ: Ես դա համարում եմ Խայամի բանաստեղծութեան մատչելիութեամբ, նրա համամարդկային ամենահիմնական խնդրի՝ մահուան եւ դրանից բխող կենսասիրութեան թեմաների պարզ ու անմիջական մատուցմամբ, մասամբ նաեւ Ֆիտղզերալդի անգլերէն թարգմանութեան միջոցով Խայամի միջազգային ճանաչմամբ: Մինչդէռ գիտեմք, որ Խայամական քառեակը Հայաստանում ծանօթ է եղել եւ թարգմանւել է միջին դարերում:

Բայց թէ ինչու՞ այդքան թարգմանութիւնից յետոյ կրկին ձեռք առայ նրա քառեակների թարգմանութիւնը, պատճառը ինքնահաւանութիւնն է, թէ տեսէք, ես աւելի լաւ կը թարգմանեմ: Անձամբ ինքս համոզւած եմ դրանում, նման կարծիք լսել եմ նաեւ ուրիշներից, բայց մէկը դեռ չեղաւ, որ գրաւոր յայտնէր իր կարծիքը:

Ինչ վերաբերում է Հաֆեզին, ապա նա միշտ էլ ինձ թւացել էր անթարգմանելի: Իմ բազմաթիւ փորձերի ժամանակ հրաժարել էի հէնց առաջին տողից:

Խայամի քառեակների թարգմանութիւնը բացեց իմ ճանապարհը, աւելի շուտ լեզուն: Դա իրապէս մեծ փորձութիւն ու փորձառութիւն էր ինձ համար: Իրապէս ստեղծագործական աշխատանք: Ամենակարե-

ւորը այն, որ ես այդ գործով ինձ համար յայտնաբերում էի հայոց լեզւի անսպառ հնարաւորութիւնները այս երկու թարգմանութիւնների հիման վրայ:

## «ՀԱՆՈՒՏ»

«Հանութ» եռամսեայ պարբերականի հետ սկսել եմ աշխատակցել թերթի խմբագիր Վարուժ Սուրէնեանի առաջարկով եւ դա ես համարում եմ իմ գրական կեանքի ամենաերջանիկ պահը: Մինչ այդ պայմանների բերումով հեռու եմ եղել որեւէ գրական շրջանակից: Սփիւռքի, թէ Հայաստանի մամուլում նիւթեր եմ տպագրել գրեթէ պատահական կերպով: Խօսքս յատկապէս գրական նիւթերի մասին է: Միշտ ներքին մի զգացողութեամբ ցանկացել եմ, որ ձայնս լսւի իրանահայ մամուլից, որը, ինչպէս յայտնի է, երկար տարիներ սահմանափակւած է եղել միակ «Ալիք» օրաթերթով, իսկ այնուհետեւ նոր պայմաններում հրատարակւած թերթերը՝ «Փիւնիկ», «Արաքս» եւ այլն, աւելի շատ եղել են քաղաքական-հասարակական բնոյթի, հետեւաբար այդ թերթերում տպագրել եմ առաւելաբար հրապարակախօսական նիւթեր: «Հանութ»-ը եղաւ այն միջավայրը, որտեղ ես արուեստի եւ գրականութեան առումով ինձ գտնում էի ինձ մօտ:

## ԺԺԿ

Յեղափոխութիւնից յետոյ Նոր Զուղայում բարձրացաւ ժողովրդական բողոքի ուժեղ ալիք, որը հիմնականում ուղղւած էր համայնքում դաշնակցականների միահեծան իշխանութեան: Շարժումը իր սկզբնական շրջանում կրում էր զուտ ինքնաբոլոս բնոյթ, որին մասնակցում էր հիմնականում արհեստաւոր խաւը: Այնուհետեւ մի խումբ մտաւորականներ մտածեցին շարժումը դնել աւելի կազմակերպւած հունի մէջ, որից էլ ստեղծեց ժԺԿ-ն «ժամանակաւոր ժողովրդական կոմիտէ»: Ես այս անւանակոչութեան մէջ դերակատար չեմ եղել, թէեւ համակրում էի շարժմանը եւ իմ հերթին ինքնակոչ առաքելութեամբ երկու այլ ընկերների՝ Հրաչ Խաչատրեանի եւ Տիգրան Ղարախանեանի հետ կազմեցինք եռեակ եւ անւանակոչեցինք «ՀՐԱՏ»: Նպատակը նոյնպէս ժողովրդական շարժումը ուղղորդելն էր, չստելու համար ղեկավարելը: «ՀՐԱՏ»-ը իր մասին յայտարարութիւն չարաւ, միայն մի երկու յօդւած ստորագրեց «Փիւնիկ» թերթում, իսկ ժԺԿ-ի հրապարակ գալուց յետոյ մերեւեց նրա հետ: Հրաչ Խաչատրեանը, ինչպէս գիտէք, ընտրեց ԻԻՀ Խորհրդարանի առաջին նստաշրջանի պատգամաւոր, որը կարելի է բնորոշել որպէս շարժման մեծագոյն յաղթանակը:

ԺԺԿ-ն լուծարեց ԻԱՄՄ-ի կազմաւորումից յետոյ, որը փաստօրէն իր ուսերին վերցրեց շարժման ղեկավարութիւնը:



## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՓԱՐԻ ԶԱՆԳԱՆԵՒԻ ՀԵՏ

‘ՍԱԹԻ’-Ի ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՄԲ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Արմինե Մելիք - Իսրայելեան

Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի դեսպանության նախաձեռնությամբ եւ Իրանի «Սաթի» բեռնափոխադրական ընկերության նախաձեռնությամբ Երեւանի Առնօ Բաբաջանեան համերգասրահում հոկտեմբերի տասներկուսին տեղի ունեցաւ Իրանի օպերային թատրոնի հանրայայտ երգչուհի, «Աշխարհի ոսկէ երգ» եւ «Բարի կամքի դեսպան» Փարի Զանգանէի եւ Իրանում յայտնի դաշնակահար, տաղահար, Իրանի «Մեհրնաւ» երգչախմբի ղեկավար՝ Նազլի Բախշայեշի «Խաւարից այն կողմ...» բարեգործական համերգը՝ նւիրած Հայաստանի տեսողական խնդիրներ ունեցող մարդկանց: Իր երաժշտական եւ հասարակական գործունէությամբ ու իր կատարումներով յայտնի Իրանի հնչեղ ձայներից մէկի հետ հայ հանդիսականը առնչեց ե ծանօթացաւ նրա արւեստի հասուն տարիքուն: Համերգի արձագանքն ու անծանօթ երգչուհու հանդէպ ունեցած ջերմ ընդունելութիւնն ու

հիացմունքը հաւաստեց, որ տարիների բացը կարող է լրացնել անգամ մէկ ելոյթն ու մէկ բարձրարեստ կատարումը: Համերգի եւ հայաստանեան իր տրպաւորութիւններով «Յոյս»-ի ընթերցողի հետ կիսուում է ինքը՝ Իրանում դասական եւ ազգային երգարւեստի անւանի գիտակն ու ներկայացուցիչ՝ տիկին Փարի Զանգանէն:

**Տիկին Զանգանէ, Նախ շնորհաւորանքներ եւ շնորհակալութիւն այն գեղեցիկ երեկոյի համար, որ դուք՝ իբրեւ հարեւան եւ բարեկամ ժողովրդի արւեստի ներկայացուցիչ կարողացաք շնորհել մեզ եւ մի գեղեցիկ ձայնեղ կապ աւելացնել երկու ժողովուրդների միջեւ, որոնք պատմականօրէն առնչել են միմեանց դարեր շարունակ: Առաջին անգամ էիք Հայաստանում. Ինչպիսի՞ն տպաւորութիւններով էք գնում...**

Ուրախ եմ եւ ոգեւորւած, որ ինձ համար առիթ



ստեղծեց Հայաստան այցելել: Ինձ համար նպատակը միայն Հայաստանում մենահամերգ ունենալը չի եղել, այլ ցանկութիւնս էր, որ այս պատմական երկիրը եւս մօտիկից տեսնել:

**Գիտե՞ք, որ ձեր կեանքը, ուսումնառութիւնը անցել է հայկական միջավայրին մերձ, ձեր դասախօսների եւ համագործակիցների մէջ շատ են եղել հայեր, երկուստեք ինչ փոխազդեցութիւն է եղել...**

Իրանաբնակ հայերը մեծ դեր են ունեցել Իրանի կոնսերւատորիայի հիմնադրման գործում եւ ես սկսած իմ ուսանողական շրջանից ունեցել եմ մեծ թւով հայ դասախօսներ, ուսուցիչներ, ապագայում նաեւ աշխատակիցներ եւ ես աշխատակցել եմ նաեւ մի շարք լաւ հայ դաշնակահարների հետ: Երբ իմ երգերը ձայնագրում էի իրանական ստուդիաներում, այնտեղ մի նշանաւոր ստուդիա կար «Սի Բի Էս» անունով, որի հիմնադիրն ու տնօրէնը մի իրանահայ էր Օհանեան ազգանունով, հետագայում ես նաեւ աշխատել եմ մի շարք յայտնի դաշնակահարների հետ, որոնցից Մարսէլ Ստեփանեանը եւ Անդրէ Օհանեանը միշտ ինձ հետ աշխատել են, եւ ինձ համար կարեւոր էր, որ իմ դաշնակահարները տիրապետեն դասական երաժշտութեան եւ թէ՛ հմուտ լինեն իրանական ֆոլկլորին: Իմ այդ հայ ընկերները տիրապետում էին թէ՛ իրանական ֆոլկ երաժշտութեանը եւ թէ՛ դասական

երաժշտութեանը եւ ես տարիներ նրանց հետ աշխատել եմ եւ ձայնագրութիւններ պատրաստել:

**Հայաստանի հանդիսատեսը Ձեզ եւ Ձեր արւեստին ծանօթացաւ Ձեր կատարողական արւեստի հասունութեան զագաթին հասած հատածում, ինչն էր, որ բերեց Ձեզ Հայաստան եւ ինչպիսի՞ տպաւորութիւն ունեցաք Ձեր ‘Խաւարից այն կողմ...’ համերգից:**

Աւելի քան յիսուն տարի է, որ բեմի վրայ եմ, բայց առաջին անգամ լինելով Հայաստանում, պէտք է հայ ունկնդրի առաջ ելոյթ ունենայի, յատկապէս հայերէն երգեր պէտք է երգէի, իսկապէս շատ յուզած էի եւ ինձ համար շատ կաւետր էր, որ հայ ունկնդիրը ի՞նչ գնահատական կը տայ իմ ներկայացրած արւեստին եւ յատկապէս իմ կատարմամբ հնչած հայերէն երգերի առիթով: Ես յատուկ շնորհակալութիւն եմ յայտնում համերգին ներկայ բոլոր խաւերի ներկայացուցիչներին, որոնք ներկայ են եղել իմ մենահամերգին, յատկապէս Հայաստանի կոյրերի միաւորման անդամներին, որոնք բոլոր դժարութիւններով հանդերձ, ներկայ գտնւեցին իմ ելոյթին եւ ես իրենց խոստացել եմ, որ պիտի այցելեմ եւ որոշ հարցեր քննարկեմ եւ ծանօթանամ մօտիկից նրանց խնդիրներին... Ուզում եմ յատուկ շնորհակալութիւն յայտնեմ Իրանում Հայաստանի

դեսպան պարոն Գրիգոր Առաքելեանին, «Սաթի» ընկերության տնօրէն պարոն Լևոն Ահարոնեանին եւ արւեստագիտուհի տիկին Ժենիկ Սուքիասեանին, որոնք ամէն կերպ ինձ օժանդակեցին այս համերգի փառահեղ կայացման համար: Համերգի ընդմիջման ժամանակ անչափ ոգէտուրեցի եւ յուզեցի, երբ դարաբաղցի մի հայ երիտասարդ ինձ այցելեց եւ ասաց, որ ութ ժամ ատորուսով եկել է, որպէսզի համերգին ներկայ լինի եւ դա ինձ շատ ոգէտուրեց: Եւ այն ծաղիկները, որ ստացայ, պիտի ինձ հետ տանեմ Իրան, չորացրած կը պահեմ եւ կը յիշեմ Հայաստանը:

**Ինչպէս երեւանեան համերգում, այնպէս էլ ձեր կատարողական կենսագրութեան մէջ դուք կատարել էք հայկական ստեղծագործութիւններ, որ՞ն է Ձեր ամենասիրած երգը:**

Առաջին հերթին ասեմ, որ մենք շատ ծանօթ ենք հայկական երաժշտութեանը, քանիորպէս մենք նոյն տարածաշրջանում եւ մեր մշակոյթները, արւեստը, երաժշտութիւնը մօտիկ են իրար: Ես տարիներ առաջ որոշեցի, որ օրօրոցային մի շարան պատրաստեմ աշխարհի տարբեր լեզուներով տարբեր ազգերի օրօրոցայիններից եւ դրանց շարքում բնական է, որ ես պէտք է ընտրէի նաեւ հայկական օրօրոցայինը: Իմ առաջին կատարումը հայերէնով եղել է օրօրոցային: Հետագայում ես Գլենդէլում պէտք է ունենայի մի մեծ մենահամերգ, այնտեղ ես նախապատրաստեցի



«Կաքաւիկ» ու «Բարի Արագիլ» երգերը եւ յուսով եմ այսուհետ կը կարողանամ խորանալ հայկական երաժշտութեան մէջ եւ նորանոր գործեր եւս պատրաստեմ:

**Ուրախ կը լինե՞ք Նորից Ձեզ տեսնել Հայաստանում, տիկին Չանգանէ... Դուք քիչ առաջ ասացիք, որ երգել էք ‘Անուշ’ օպերայից արիա, արդե՞ծք ծանօթ էք Նրա անզուգական կատարողին՝ Գոհար Գասպարեանին:**

Ինչպէս ասացի, իմ դաշնակահարներից պարոն Անդրէ Արզումանեանը շատ լաւ է տիրապետում հայկական երաժշտութեանը եւ երբ պատրաստում էի «Անուշ» օպերայի պատկան արիան՝ անգամներ անձամբ լսել եմ հայ մեծանուն երգչուհի տիկին Գոհար Գասպարեանի կատարումը, որպէսզի կարողանամ ճշգրիտ կերպով այն վերարտադրել: Իրանում ապրում եմ մեծ թւով հայեր եւ մենք շատ լաւ յարաբերութիւններ ունենք նրանց հետ եւ միասնաբար մշակութային աշխատանք ենք տանում:



հայկական նշանաւոր «Անուշ» օպերայից մի արիա եւ դաշնակահար Մարսէլ Ստեփանեանի օգնութեամբ ես դա ներկայացրեցի: Յետոյ, երբ հայաստանեան այցելութեան հրաւերն ստացայ, որոշեցի մի քանի հայկական երգ էլ պատրաստեմ Հայաստանում ներկայացնելու համար, այդտեղ ես դիմեցի իմ սիրելի բարեկամներ, արւեստասէր ընտանիք պարոն Տիգրան Սուքիասեանին եւ նրա տիկնոջը՝ Ժենիա Սուքիասեանին եւ նրանք անգամներ ինձ հետ փորձեցին, օգնեցին յատկապէս նոտաներն ու արտասանութիւնները եւ ես պատրաստեցի

**Պատահարը, որը փոխեց Ձեր կեանքը եւ ինչ որ չափով նաեւ ստեղծագործական ուղին, դէպի ու՞ր տարաւ Ձեզ:**

Հետաքրքիր ակնարկ կատարեցիք... Այդ պատահարը, որը իմ ներկայ վիճակիս պատճառը եղաւ, շատ բան փոխեց իմ կեանքում... Իմ անձնական եւ ընտանեկան կեանքի վրայ դաժան ազդեցութիւն թողեց... Բայց, ես ունէի բարեկամներ, ընկերներ, որոնք ինձ քաջալերեցին եւ ես խորացայ օպերայի մէջ: Ինձ իմ դասախօսները շատ օգնեցին նոր ճանապարհ անցնելու, օգնեցին համերգներ ունենալ եւ կարծես նոր աշխարհ բացեց ինձ համար: Իմ անցեալ կեանքին ես նայում եմ մեծ յուզմունքով եւ իմ ներսում արտասուում եմ... Այն կեանքը իմ մտապատկերում դաջւած է ինչպէս մի գունդ նկար, մի պատկեր, մի կտաւ, որի գոյներն իմ մէջ են... դժուար է չտեսնող մարդու համար, որ տեսել է եւ հակառակը... Հոգեբանական տարբեր խնդիրներ են... Բայց ես վաղուց ինձ համար ընտրութիւն

կատարեցի յանձնելու եւ առաջ նայելու միջեւ ու հայեացքս այդուհետ եղաւ միշտ դէպի ապագան...

**Երգեցիք բարեգործական համերգ Հայաստանի կոյրերի համար՝ հաճելին օգտակարի հետ զուգակցելով... Ըստ Ձեզ, ինչ ունենք մենք միմեանց տալու մշակոյթի ասպարեզում...**

Հայաստանի անկախացումով նոր հանգրւան, նոր էջ բացուեց Իրան- Հայաստան յարաբերութիւնների ասպարեզում եւ բնական է նաեւ կընդարձակելի նաեւ մեր մշակութային կապերը: Լաւագոյն փաստը մեծ թւով իրանցի ուսանողներն են, որոնք այժմ գտնուում են Հայաստանում եւ նրանք կարող են դառնալ մեր արւեստի, մեր մշակոյթի փոխադարձ համագործակցութեան դեսպանները: Վստահ եմ, որ մեր յարաբերութիւնները յատկապէս մշակոյթի ազպարեզում գնալով աւելի կընդարձակեն, աւելի կը հզօրանան:

**Ինչն է, որ Ձեզ դուր եկաւ հայ արւեստի մէջ:**

Նուրը ձեր արւեստի եւս իմուլիկայի մէջ ինձ շատ հիացրեց եւ զարմացրեց, հայ վարպետներն ինչքան զեղեցիկ իրեր, զարդեր են պատրաստում նոյն և Իրանը նաեւ հայրենիքն է, բայց նուրը Հայաստանի խորհրդանիշն է ասես: Շատ սիրեցի ու ինքս էլ մի վզնոց եմ գնել ինձ համար՝ նաեւ զարդով:

**Ինչ կարգախօսով էք առաջնորդում կեանքում:**

Լինել միշտ լաւատես եւ այդ լաւատեսութիւնը փոխանցել մարդկանց:

**Ինչով է այժմ զբաղւած Փարի Չանգանէն, առաջիկայ ինչ ծրագրեր ունէք:**

Աշխատում եմ մի քանի ուղղութեամբ: Դասաւանդում եմ, աշխատում եմ իմ նոր գրքի վրայ, որը իմ կենսագրութիւնն է, իմ անցած ուղին եւ ներկայացնում եմ նաեւ Իրանի մեծ արւեստագէտներին: Պատրաստում եմ ազգային երգերի մի նոր շարան, որը մինչեւ իրանական Նոր տարին՝ Նոռուզը, որ մարտ ամսին է՝ նոր ծայնասկաւառակը պատրաստ կը լինի: Ծրագիր ունեմ Անդրիա Բոչելլիի հետ համերգ կազմակերպելու ընդհանրապէս աշխարհի կոյրերի համար եւ այդ գործերով եմ զբաղւած:

**Ձեր մաղթանքը...**

Մաղթանքս է, որ բոլոր ժողովուրդները հեռու մնան խռովութիւններից, թշնամանքից: Մենք բոլորս Աստոյ զաւակներն ենք եւ պէտք է իրար հետ լաւ լինենք, միմեանց հանդէպ բարի լինենք...

**Շնորհակալութիւն տիկին Փարի՝ հաճելի զրոյցի համար:**



Արման Ս.Սոտկանեան

## ՀՈՒՓՍԻՍԷ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆԸ՝ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՄՈՒՆՆՈՒԹԻՒՆ

Արդէն մի քանի ամիս է, ինչ աւարտել է աշխարհի ամենակարեւոր մարզական իրադարձութիւնը՝ Մեծն Բրիտանիայի մայրքաղաք Լոնդոնի Օլիմպիական խաղերը: Մրցութիւններից յետոյ մարզիկներից շատերը իրենց հանգիստն են վայելում, իսկ միւսները արդէն անցել են մարզումների՝ իրենց պատրաստելով առաջիկայ մրցութիւնների: Սակայն դրանցից ոչ մէկը այն չի անում, ինչ այս օրերին անում է հայ ազգի



## ՈՒԻԼԻԱՄՉ ԲՈՅՐԵՐԸ ԿՊԱՇՏՊԱՆԵՆ ԿԱՆԱՆՑ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐԸ

Թենիսի համաշխարհային աստղեր Ուիլեամսը քոյրերը՝ Սերենան և Վինուսը, մեկնել են Նիգերիա՝ «Քանդելով կարծրատիպերը յատուկ ծրագրի շրջանակներում: Նրանց ճանապարհորդութեան նպատակն Աֆրիկայի կանանց իրաւունքների պաշտպանութիւնն է: Այս ամսին տեղեկացնում է tennis.com-ը: Լաոսում Ուիլեամսը քոյրերը մարզումներ կանցկացնեն տեղի կորտերից մէկում, կը մասնակցեն նիգերիացի աղջիկների հետ հանդիպումներին, ինչպէս նաեւ հանդէս կը գան ցուցադրական խաղով:

մարզուհի եւ արդէն օլիմպիական խաղերի բրոնզէ մեդալակիր Հռիփսիմէ Խուրշուդեանը: Հայաստանի ծանրամարտի ազգային հաւաքականի անդամ Հռիփսիմէ Խուրշուդեանը հոկտեմբերի 21-ին ամուսնացաւ: Այս լուրը, թէ նա ամուսնանալու է, արդէն իսկ յայտնում էին բոլոր լրատուական միջոցները դեռ նախքան օլիմպիական խաղերը: Իսկ Խուրշուդեանը առաջաւոր ասել էր, որ շարունակելու է մարզանքը մինչեւ յաջորդ օլիմպիական խաղերը, որը կայանալու է Բրազիլիայի Ռիօ քաղաքում 2016-ին:

Հռիփսիմէ Խուրշուդեանը ծնւել է 1987 թականի յուլիսի 27-ին Հայաստանի Քասախ գիւղում: 2012 թականի Լոնդոնի օլիմպիական խաղերում նա առաջինն էր, ով Հայաստանի մարզական հաւաքականի համար կարողացաւ նւաճել բրոնզէ մեդալ կանանց ծանրամարտի +75 կգ



քաշային կարգում կանգնելով Տատիանա Կաշիրինիայի եւ Ժու Լուլուից յետոյ: Հռիփսիմէն պոկում վարժութիւնը աւարտեց 128 կգ, իսկ հրումը 166 կգ ցուցանիչով արդիւնքում հաւաքելով 294 կգ, ինչը 39 կգ-ով քիչ էր յաղթողի՝ Ժու Լուլուի արդիւնքից: Այս տարւայ օլիմպիական մրցութիւններից բացի, Խուրշուդեանը մասնակցել

է տարբեր միջազգային մրցութիւնների: Նա 2009 թականի միջազգային մրցութիւններում շահել է բրոնզէ մեդալ: Բացի այդ, նա եւրոպական ծանրամարտի մրցութիւններում ձեռք է բերել նաեւ տարբեր մեդալներ, որոնցից կարելի է նշել 2007 թականի Ստրասբուրգի ոսկէ մեդալը:



**ԱՄԲՐՏԻՅՑ ԶԱՅՍԱՏԱՆԻ ԶԻՒՂՅԻ ՄՐՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Հայաստանի ծիւղոյի առաջնութեան մրցութիւնները աւարտուեց եւ յայտնի դարձաւ տարբեր քաշերում յաղթողների անունները: Հայաստանի ծիւղոյի ազգային հաւաքականի մարզիչ Տիգրան Բաբայեանը նշեց, որ այս տարւայ մրցութիւնների յաղթողների մեծ մասը Երեւանից, Գիւմրիից եւ Վանաձորից էին: Ըստ Բաբայեանի, այս մրցութիւնների յաղթողները կը մասնակցեն գալիք տարւայ յունւարի միջազգային մրցութիւններին, որոնք կը կայանան Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում:

**ԴԱԻԹ ԶԱՅՐԱՊԵՏԵԱՆԸ ԿԸ ՄԱՅՑ ՈՉ ՊՐՈՑԵՍԻՈՆԱԼՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ**

Ռուսաստանի ազգային հաւաքականի բռնցկամարտիկ Դաւիթ Հայրապետեանը ասել է, որ դեռ չի ցանկանում մուտք գործել պրոֆեսիոնալ շինգ: Նա, որ այս տարւայ Լոնդոնի օլիմպիական խաղերին Ռուսաստանի դաշնութեան դրօշի ներքոյէր հանդէս գալիս, կարողացաւ 49 կգ քաշում շահել բրոնզէ մեդալը: Սակայն, նա ուզում է շարունակել մարզումները պատրաստուելով Ռուսաստանի, ապա Եւրոպայի, ինչպէս նաեւ միջազգային առաջնութեանը:







## ԳԻՐՔԸ ԹՈՂ ՄԵՏՐՈՅՈՒՄ ԿԱՐԴԱՑԱԾ ԳԻՐՔԸ ՆԻԻՐԵԼ ԱՆԾԱՆՕԹ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ



Կան գրքեր, որոնք պիտի պահել գրապահարանում, քանի որ շարունակ կարող էք դիմել դրանց: Այս տեսակի գրքեր են բառարանները, հանրագիտարանները, խոհարարութեան գրքերը եւ այլն: Ձեր սիրած բանաստեղծների գործերի հաւաքածոները եւս կարող էք կրկին եւ կրկին կարդալ: Բայց այդպիսին չեն վէպերը եւ մի շարք այլ գրքեր, որոնք մի անգամ ընթերցելուց յետոյ, շատ անհաւանական է երկրորդ անգամ բացէք: Դրանք կուտակում են պահարաններում, մինչդեռ կան ուրիշ մարդիկ, որ կարող են հաճոյքով կարդալ դրանք: Ահա հէնց այսպիսի դրութեան արդիւնքում է յղացել գրքի ազատ փոխանակութեան միտքը: Դուք ձեր կարդացած գիրքը թողնում էք որեւէ ցանկացած վայր՝ տաքսիում կամ մետրոյում, կամ զբօսայգու նստարանի վրայ, կամ էլ կարող էք այն դնել քաղաքի տարբեր տեղերում պատրաստուած յատուկ պահարաններում: Նոյն պահարանում, ուրիշ մարդկանց միջոցով դուրս գրքերի մէջ, հաւանական է գտնէք ձեր ցանկացածը: Ահա փոխադարձ շահաւէտ փոխանակութիւն, որը նաեւ ընդհանուր առմամբ խրախուսում է ընթերցանութիւնը:

**«Յոյս» երկշաբաթաթերթը  
Վաճառում է**

**«Արարատ» Մարզալան-ում**

մیدան օնկ - Խիպան Արարատ

տեղք: 88030224

**«Նաշրէ Չեշմէ» գրախանուք-ում**

Զիր քլ քրիմ Խան, Նիշ Միրզայ Տիրազի,

«Նիշ Կիշմե»

տեղք: 88907766

**«Դայ Ակուճր»-ում**

Խիպան Անքլաբ, Խիպան Ուփլ Լուշատու,

Խիպան Խարք, Տարհ 1

«Անյն Արաճե Թերան»

**«Շանք Սուրճ»-ում**

Տիր Մրճ յնուբի-Տիհիճքար Աքճի

քլաք 116

տեղք: 77826617



**ARA BURGER**  
FAST FOOD RESTAURANT

Արա Բըրգըր

**ԱՐԱ ԲԵՐԳԵՐ**

**Տնօրէն՝ Ղազարեան**

**Tel: 77 82 13 30**

**77 82 13 29**

Աճրս : Մյիճիճիե , Խիպան Գլեբրց Գրիբի (Եանիազան), Տքաք Խիպան քրճան,  
Անճայ Խիպան Տիհիճ Այասի, քլաք 2


**TADEH**  
BARBER

քր Անիե  
Ունամիե  
Մսափ քրճոն Մր  
քրիմ ճամաճ

Խիպան Եար Տիրազ, քրիշե Ուբար-Երրաիշ Ուբար  
Մարաճ: 38 00300924

**Art**

**system**



Arthur , Alen , Alex



**ճճճատ ՄաՏինիայ Աճարի**


ՏրօյիՏ օ Գեճիր քլաքրայ Այզրի ՄօհրափՏան HP օ Տօռնի EPSON

տեղք: 88221436-7 օ 88315243-4

ֆքս: 88833000

Աճրս: Թերան, Խիպան Արաճե յնուբի, Այն Տրազ Խիպան Տիհիճ.

Տարհ 7, քլիքե ՏօՄ, Աճճ 5



دوهفته‌نامه  
اجتماعی فرهنگی

# هوس

شماره ۱۳۴ / ۱۷ آبان ۱۳۹۱ / قیمت ۱۸۰۰ تومان


سال ششم

## هاکوپ گوجویان

۱۹۲۲ م. استانبول

دو هفته نامه  
اجتماعی فرهنگی  
**هووس**

شماره ۱۷، ۱۳۴، آبان ۱۳۹۱  
سال ششم



**آزاد ماتیان به روایت  
آزاد ماتیان**

صاحب امتیاز و مدیر مسؤول:  
لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان  
شورای نویسندگان:

لیا خاچکیان  
گارون سرکیسیان  
آرمینه ملیک ایسرائلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان در استپانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، میدان آرژانتین،  
خیابان زاگرس، خیابان سی و پنجم،  
پلاک ۱۳، واحد ۵

تلفن: ۸۸۷۷۰۶۵۸  
۸۸۷۷۵۶۵۶

نشانی وب سایت:

[www.hoos.com](http://www.hoos.com)

وب سایت فارسی:

<http://farsi.hoos.com>

پست الکترونیکی:

**در این شماره**

در صفحات ارمنی این شماره	۲
یازدهمین دوره اجلاس سالانه مشترک ایران و ارمنستان در ایروان	۴
لئون آهارونیان	
دو خبر از ارمنستان	۵
آینده روابط حزب جمهوری ارمنستان و حزب ارمنستان مرفه	۶
گایانه آبراهامیان	
حیثیت حکومت در گروه افشای کامل واقعه ۲۷ اکتبر	۷
سرکیس هاروطونیان	
نقاشان ارمنی: هاکوپ گوجویان	۸
آزاد ماتیان به روایت آزاد ماتیان	۱۱
شعری از مجموعه گل های کویر	۱۳
آزاد ماتیان	
وبلاگ گارنی: گنجینه دانستنی ها درباره ارمنه	۱۵

**بخش ارمنی**

خطر در کمین ارمنه سوریه	۲
لئون آهارونیان: شکاف بین مجمع نمایندگان و مردم را بزرگ کرده اند	۳
ارمنستان: حیثیت حکومت در گروه افشای کامل واقعه ۲۷ اکتبر	۶
سرکیس هاروطونیان	

**آزاد ماتیان به روایت آزاد ماتیان**

به مناسبت هفتادمین سالگرد تولد و انتشار کتاب های نشان جهان و چارنتس کیست؟

۸ کودکی / مدرسه / آبادان / جلفای نو-دانشگاه / پاریس / گل های کویر / ارمنستان / آهنگ بدون  
انقطاع / چارنتس / نارکاتسی / نشان جهان / زادورافلی / هاندس / حافظ و خیام / جوچی / کمیته مردمی  
موقت (ژ. ژ. ک)

کنسرت پری زنگنه در ایروان	۱۹
آرمینه ملیک-ایسرائلیان	
ورزش	۲۲
آرمان در استپانیان	
کتابت را در مترو بگذار	۲۴

## گوشه‌هایی از آن چه در صفحات ارمنی این شماره هوئیس آمده است

درباره زندگی خود و نخستین سفرش به ارمنستان سخن گفت. گوشه‌هایی از حرف‌های او را در این جامی خوانید:

- ارامنه ایران نقش بزرگی در موسیقی ایران بازی کرده‌اند. من در دوران دانشجویی استادان ارمنی داشته‌ام و از ابتدای فعالیت جدی در عرصه موسیقی با تعدادی زیادی از نوازندگان ارمنی همکاری کرده‌ام که می‌توانم از میان آن‌ها به پیانیست‌هایی مانند مارسل استپانیان و آندره اوهانیان اشاره کنم. برای من مهم بود که کسی که همراهی‌ام می‌کند هم به موسیقی کلاسیک آشنا باشد و هم به موسیقی فولکلور ایرانی. من سال‌ها با این آدم‌ها همکاری کرده‌ام و کارهایم را با همراهی آن‌ها ضبط کرده‌ام.

- نخستین بار بود به ارمنستان می‌آمدم و با وجود این که پنجاه سال تجربه حضور در صحنه دارم، خیلی هیجان‌زده بودم. قرار بود چند آهنگ ارمنی هم اجرا کنم و نمی‌دانستم مخاطب ارمنی کارم را چگونه ارزیابی خواهد کرد.

- از حضور اعضای انجمن نایب‌نایان ارمنستان در کنسرت بسیار ممنونم. قرار شده است ملاقات‌هایی با آن‌ها داشته باشم و از نزدیک با مشکلات‌شان آشنا شوم.

- این‌ها هم بگویم که موسیقی ارمنی برای من بیگانه نبود. ما در یک منطقه زندگی می‌کنیم و فرهنگ، هنر و موسیقی ما خیلی به هم نزدیک است. سال‌ها پیش من برنامه‌ای داشتم که لالایی‌های ملل مختلف را گردآوری و اجرا کنم و طبیعتاً در میان این‌ها لالایی‌های ارمنی هم بودند. بنابراین نخستین اجرای من به زبان ارمنی یک لالایی بوده است. در سال‌های بعد در گلندل کالیفرنیا کنسرتی داشتم که در آن جا هم بخشی از اپرای آنوش را به همراهی پیانوی مارسل استپانیان اجرا کردم.

- برای تمرین آوازهای ارمنی‌ای که در کنسرت ایروان خواندم سراغ آهنگساز و هبر گروه آواز تیگران سوکیاسیان و همسرش ژنیا سوکیاسیان رفتم. آن‌ها در ادای درست کلمات کمک بزرگی به من کردند و من با یاری آن‌ها دو ترانه از ترانه‌های فولکلور مشهور ارمنی را آماده کردم. بعد وقتی کمی با این موسیقی انس گرفتم، سراغ ترانه‌های دیگری هم رفتم.

- وقتی اپرای آنوش را تمرین می‌کردم، آقای استپانیان نواز اجرای گوهار گاسپاریان را برایم



### کنسرت پری زنگنه در ایروان

به ابتکار سفارت جمهوری اسلامی ایران در ارمنستان و با حمایت شرکت حمل‌ونقل بین‌المللی سَتی، پری زنگنه، خواننده مشهور ایرانی در سالن آرنو باباجانیان ایروان کنسرتی برای حمایت از نایب‌نایان برگزار کرد. پری زنگنه را گروه آواز مهر آوا به رهبری نازلی بخشایش همراهی می‌کرد. نازلی بخشایش نوازنده‌گی پیانو را نیز به عهده داشت. عنوان کنسرت «آن سوی تاریکی» بود. پری زنگنه در مصاحبه‌ای اختصاصی با هوئیس



### بزرگداشت آزاد ماتیان

آزاد ماتیان، شاعر و مترجم بنام ارمنی-ایرانی و استاد کرسی زبان و ادبیات ارمنی دانشگاه اصفهان اخیراً دو کتاب منتشر کرده است. نخستین کتاب مجموعه شعری است به نام نشان جهان که شامل اشعار جدید اوست و همین‌طور بازچاپ گزیده‌ای از دفترهای پیشین‌اش. کتاب دیگر رساله‌ای است به نام چارنتس کیست؟ که به تحلیل زندگی و دیدگاه‌های شاعر بزرگ ارمنی یقیشه چارنتس با ارجاع به اشعار خود او و خاطرات همسرانش درباره او می‌پردازد. قرار است گروهی از دوستان آزاد ماتیان در روز ۱ آذر مراسم بزرگداشتی برای او بگیرند. ما هم این شماره هوئیس را به او اختصاص داده‌ایم. به جای مصاحبه مألوف، از آزاد خواستیم درباره زندگی و آثارش بنویسد. تنها تعدادی کلمه به او دادیم و خواستیم درباره هریک به اختصار توضیحاتی بدهد. نتیجه این درخواست نوشته‌ای شد به نام «آزاد ماتیان به روایت آزاد ماتیان». روایت شیرینی از زندگی شاعر و نگاهی که خودش به کارش دارد. در صفحات فارسی ما، می‌توانید ترجمه بخشی از این زندگی‌نامه را بخوانید.

آورد و من با گوش دادن سعی کردم به طرز دقیقی آن را بازآفرینی کنم.

- حادثه مصیبت باری که به ناینایی من انجامید تاثیر بسیار سوئی بر زندگی شخصی و خانوادگی من گذاشت، اما در عین حال باعث شد با تشویق دوستان و علاقه‌مندانم هر چه بیشتر بر هنر اپرا متمرکز شوم.

- شعار من در زندگی این است: همیشه امیدوار بودن و این امیدواری را به دیگران منتقل کردن.

- در حال حاضر سرم خیلی شلوغ است. تدریس می‌کنم. روی کتاب خاطراتم که هم زندگی‌نامه خودم هست و هم شامل معرفی هنرمندان ایرانی می‌شود کار می‌کنم و در عین حال دارم آلبوم جدیدی از ترانه‌های ملی ایرانی را آماده می‌کنم که امیدوارم پیش از عید نوروز منتشر شود.

## لئون آهارونیان:

### بین مردم و مجمع نمایندگان فاصله انداختند

روز بیست‌وششم آبان انتخابات پانزدهمین دوره مجمع نمایندگان ارمنه تهران و شمال کشور (پادگام‌اوراکان زُقوو Padgamavorakan zhoghov) برگزار می‌شود. در شماره‌های گذشته هویس به سراغ گروهی از نمایندگان دوره چهاردهم و دیگر صاحب‌نظران و فعالان اجتماعی رفتیم و نظرشان را درباره شرایط اجتماعی-سیاسی جامعه ارمنه که انتخابات یادشده خواه نا خواه بر بستر آن انجام می‌گیرد، جويا شدیم. در این شماره مصاحبه‌ای با لئون آهارونیان صاحب امتیاز دو هفته‌نامه هویس کرده‌ایم. آهارونیان در دو دوره نخست مجمع نمایندگان عضو پادگام‌اوراکان بوده و تجربه‌ای بیست‌ساله در این زمینه دارد. گفتنی است که بعد از پیروزی انقلاب اسلامی انتخاباتی برای دهمین دوره این مجمع برگزار شد و شش سال بعد از آن، در سال ۱۹۸۶ دوره یازدهم این مجمع شکل گرفت، دوره‌ای استثنایی که به علت نارضونی وضعیت حقوقی تشکیلات درونی ارمنه به جای چهار سال، چهارده سال طول کشید. آهارونیان در این دو دوره عضو مجمع و همزمان عضو و رئیس شورای خلیفه‌گری ارمنه تهران بوده است. او معتقد است:

دهمین دوره پادگام‌اوراکان که بعد از پیروزی انقلاب شکل گرفت به گمانم بهترین دوره آن



بوده است. آدم‌هایی از گروه‌های مختلف در این دوره شرکت می‌کردند، در حالی که پیش‌تر از آن تنها آدم‌های خاصی اجازه می‌یافتند وارد مجمع شوند. اما از دوره یازدهم اوضاع تغییر کرد. ترکیب نمایندگان عوض شد و سطح سواد آن‌ها افت کرد. تعداد زیادی از صنعتکاران به عنوان نماینده انتخاب شدند که از اوضاع سر در نمی‌آوردند. آن‌ها قدرت تصمیم‌گیری مستقل نداشتند و چشم‌شان به رفیق اعتقادی‌شان بود که به چه رای بدهند. در واقع حزب حاکم یک عده آدم‌های بی‌اطلاع را آورده بود به مجمع تا هر کاری خواست بتواند بکند.

نتیجه این شد که شکاف بین مردم و ارگان‌هایی مانند مجمع نمایندگان افزایش یافت. در دوره یازدهم به ابتکار شادروان هارمیک داوتیان که رئیس مجمع بود یک نظرخواهی ترتیب داده شد که نتایجش نشان می‌داد هفتاد درصد مردم اصلاً نمی‌دانند مجمع نمایندگان (پادگام‌اوراکان) یعنی چه.

نتیجه این وضعیت افت جدی تعداد شرکت کنندگان در انتخابات بعدی بود. در سال ۲۰۰۰، در انتخابات مجمع دوازدهم حدود ۹۰۰۰ نفر در انتخابات شرکت کردند (نزدیک ده درصد جمعیت ارمنه تهران). در انتخابات چهار سال بعد از آن این تعداد به ۴۹۰۰ نفر رسید. این امر به نظر من نتیجه افزایش بی‌اعتمادی مردم به عملکرد ارگان‌هایی بود که زندگی اجتماعی و سیاسی جامعه ارمنه را اداره می‌کردند.

آهارونیان شرکت مردم در انتخابات را مهم می‌داند

و معتقد است هر چه تعداد نمایندگان که وابسته به یک جریان خاص نیستند بیشتر باشد، مجمع بهتر می‌تواند به وظایف خود عمل کند.

آهارونیان در پاسخ به این سوال که حضور نمایندگان مطبوعات در جلسات مجمع را که از دوره چهاردهم شروع شد چگونه ارزیابی می‌کند، می‌گوید: «بسیار مثبت. تصمیم بسیار خوبی بود. بگذار همه مطبوعات درباره همه چیز بنویسند. باید خوشحال باشیم از این موضوع. اگر اشتباه می‌نویسند می‌گوییم حرف‌تان اشتباه است. بگذارید مردم، بخصوص روشنفکران، بیابند و در تشکیلات اداره جامعه ارمنه مشارکت کنند».

## فشار بر ارمنه سوریه افزایش



روز ۲۹ اکتبر مردان مسلح در نزدیکی حلب ده مرد را به گروگان می‌گیرند. هفت تن از این عده ارمنی هستند.

روز ۱ نوامبر مرد ارمنی دیگری در نزدیکی کلیسای سورپ گنورگ حلب کشته شده است. گفته می‌شود که در یک سال و نیمی که درگیرها در سوریه ادامه دارند، حدود چهل نفر از ارمنه این کشور کشته شده‌اند و اینک با نزدیک شدن برخوردهای مسلحانه به حلب، هزاران تن از ارمنه شهر، آن جا را ترک کرده‌اند.

# یازدهمین دوره اجلاس سالانه مشترک ایران و ارمنستان در ایروان

لئون آهارونیان



از قبیل انجمن‌های دوستی  
۷- همکاری در امور کشاورزی و دامداری  
۸- همکاری در رابطه با راه سازی و حمل و نقل و مسائل انرژی خرید سوخت از ایران  
پس از معرفی شرکت کنندگان دو طرف به یکدیگر، مذاکرات و تصمیم گیری‌ها بین چهار کمیته تقسیم و برای هر کدام جای معینی تعیین گردید و کار مذاکرات شروع شد.

اینجانب هم که در تمام اجلاس‌ها از طرف اتاق بازرگانی مشترک ایران و ارمنستان جزو شرکت کنندگان کشورمان بوده‌ام، در کمیته بانکی و سرمایه‌گذاری شرکت نمودم.  
از طرف ایران رئیس بانک ملت جناب آقای باقری و مشاور حقوقی بانک آقای سعیدی حضور داشتند. از بانک مرکزی سرکار خانم فریده نادری و از بانک توسعه صادرات آقای هوشنگ گودرزی شرکت داشتند و از طرف ارمنستان از بانک مرکزی آقای آزادیان و مشاور حقوقی سرکار خانم تادویک بودند و همچنین از طرف بانک توسعه ارمنستان آقای آرام و از طرف وزارت اقتصاد هم یک نماینده در جلسه شرکت داشتند. اینجانب که همراه همکارم دبیرکل اتاق مشترک بازرگانی ایران و ارمنستان رضا حیدری در جلسه حاضر بودم، توانستیم ایجاد «مرکز آزاد ایرانیان در ارمنستان» و شرکت «آرمان آگرو اینداستری کمپلکس» - Arman Agro- industry complex در پروتکل بگنجانیم. لازم به توضیح است که این دو شرکت با ابتکار و پیگیری مداوم اتاق بازرگانی مشترک ایران و ارمنستان بر حسب ضرورت ارتقاء تجارت و همکاری کشاورزی، تشکیل شد.

بحث‌ها و مذاکرات ساعت‌ها به طول انجامید و پس از ناهار هم مذاکرات ادامه داشت تا آخر وقت که مصوبات کمیته‌ها روز یک ورقه مخصوص به دو زبان فارسی-ارمنی توسط مترجمان حاضر در کمیته‌ها ترجمه و آماده و تحویل دبیرخانه گردید که پس از اصلاح و یا مطابقت نمودن مفاد آن مصوبات کمیته با دستور کار جلسات میبایستی در روز بعد به امضاء دو وزیر از دو کشور همسایه به امضاء برسد.  
مقامات برجسته‌ای از طرف ایران در جلسه

